

ଶ୍ରୀମଦ୍ଭଗବତ

ନଂ ୧୩୭ ୧୯୫

ନଂ ୧୩୮ ୧୯୫

ପିଲାଙ୍କାଳ

ବ୍ୟାଖ୍ୟାନ

ଶ୍ରୀମଦ୍ଭଗବତ

ବ୍ୟାଖ୍ୟାନ ଲପନ ପରିଚ୍ୟାତଃକାରୀ

ପ୍ରକାଶ - ୨୦୩୫

ԳԵՂԱՐՔՈՒՅԹԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՊՐԻՎԱՏԱՐԱՆ

№ 157—158

№ 157—158

361.99

Ե Տ Բ Կ Ա Ն Զ Ա Դ Ե

Ը - 66

ԽՈՎԻԿԱՆ Ե 1961 թ.

1615

Մ Ե Լ Ա Ն Դ Ա



ԽՈՎԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԱԱՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Յերևան — 1938

1

— Մելանիա, ուրախացի՛ր. Պետերբուր-
չից հեռագիր ստացա. սենատը դործը վճռել
ե մեր ողակին: Հորեղբորս վորդին հույս ու-
ներ մեղանից չորս հարյուր հազար ստանա-
լու, հիմա չո՞րս կոպեկ չի ստանալ: Ո՞ւ,
վերջուղես աղատվեցի գլխացավից: Այժմ
կարող ենք ապրել, ինչպես հարկն է:

Ինքը՝ Սամանն Ֆրանդուլյանն այնքան ու-
րախ եր, այնքան զգացված, վոր ամուր
դրկեց ամուսնուն և համբուրեց: Յերեսուն
տարի աշխատասեր մարդը վոսկոր ե կոտրել,
դիզել ահագին հարստություն և հանկարծ
մի անգործ աղղական ուղում եր խլել այդ
հարստության մի յերբորդականը: Հանաք

բա՛ն չեր բաժանվել մի այդպիսի գումա-
րից : Յեվ բաժանվել այն ժամանակ, յերբ
նա զործերը թողել եր, տեղափոխվել Կով-
կասի մայրաքաղաքը «Հանգստանալու և ապ-
րելու» համար :

Նա յերջանիկ էր : Թեև ավելի քան կես
դար արդեն անցել եր նրա գլխառվ, բայց
կազմվածքը դեռ ոլահոլանել եր կանոնավո-
րությունը, ձայնը դեռ հնչում իր խրոխտ,
քայլվածքը դեռ աշխույժ էր, իսկ ստամոքսը
բոլորովին անխախտ : Փռոյթ չե, վոր մազերը
կիսով չափ ճերմակել Եյխն—դա ժամանակին
անխուսափելի հետևանքն եր : Կար միայն մի
հոգո, վոր յերբեմն նրան գցում եր ծանր
մտատանջության մեջ : Սակայն, հուսալով
իր հարստության վրա, նա հավատացած էր,
վոր այս հոգսից ել կարող ե ազատվել . . .

Վեց տարի յեր անցել ընդամենը, վոր նա
ամուսնացել էր : Ունեցել էր յերկու զավակ,
վորոնցից անդքանիկը մեռել էր դեռ ծծից
չկտրած . . . մնում էր յերկը յերկու տարե-

կան մի ո դա: Այդքան ժամանակվա ընթայ-
քում վո՞չ մի սե զիծ չեր անցել ամուսիննե-
րի միջով: Մարդն իր բնական տարածով ու
խելքով, կինը կրթությամբ—կարողացել Եյին
հարգել իրարու ինքնասիրությունը և կե-
նակցել հաշտ, անխռով: Կար մի հանգա-
մանք, վոր միշտ պիտի յերաշխավորեր Մե-
լանիայի հարգանքն ու պատկառանքը դեպի
ամուսինը—այսպես եր համոզված Սամսոնը.
—Մելանիան ազքատ ծնողների դավակ եր,
Սամսոնը՝ հարուստ: Յեթէ Մելանիան յերի-
տասարդ ե, կրթված, գեղեցիկ, նույնիսկ
գրավիչ, որա փոխարեն՝ Սամսոնը կերակ-
րում ե նրա ծնողներին, ուսում ե տալիս
յեղբայրներին և խոստանում ե իր ծախսով
ամուսնացնել քույրերին: Ուրեմն, կշեռքի
թաթերը հավասար են: Յեկ վո՞չ մի խոչըն-
դուռ Սամսոնի բախտի առջև, և վո՞չ մի
մռայլ ամպ նրա կյանքի հորիզոնում: Իսկ
այսուհետեւ նամակավանդ չպիտի լինի, քանի

վոր Սամսոնը թողել է զործերը և անձնատուր յեղել կնոջն ու նրա կամքին։ Քանի վոր նա լիակատար իրավունք է տվել Մելանիային ծախսել, վորքան կամենում և, ապրել, իսչպես քեֆն և, ծանոթություններ սկսել, ուժհետ փափագում է։

Նա մի ձեռքով գրկեց Մելանիային և յերջանկության ժողովուն յերեսին, անցավ նրա հետ սենյակից սենյակ՝ մի անգամ ևս նոր կացարանն աչքի անցկացնելու։ Ամեն ինչ արդեն կարդին եր. սենյակները կահավորութած ու զարդարված, յուրաքանչյուրն առանձին ճաշակով, լուսամուտները վարդուրված թանգարդին կտորներով, հատակները ծածկված խայտաբղետ դորդերով։ Ամեն անդ յերեսում և տանտիրոջ առատաձեռնությունը և տանտիրոջ ճաշակը։ Ախոռատանը կապած եյին սքանչելի ձիերը, վոր Սամսոնը նոր եր սաացել Մոսկվայի մի հայտնի գործարանատերից։ Գավթում կառապանը յերգ ասելով, սրբում ու հղկում եր, առանց

այն ել հայելու ալես փայլող, կարեթը։ Առարար, սպասավոր, նաժիշտ, տնտեսուհի—բոլորը զբաղված եյին իրենց գործով, բոլորն ակնածությամբ նայում եյին իրենց տիրուհու—աչքերին։

Մելանիան ուներ միջոց ծանոթանալու ում հետ ևս կամենար։ Հարուստ եր, յերիտասարդ, զեղեցիկ ու կրթված—հանգամանքներ, վորոնք կարող եյին նրա առջև բաց անել ամենաամուր փակված դռները։ Յեզ նա կարողացավ ողտվել իր միջոցներից։ Նրան ընդունում եյին ամեն տեղ սիրով և այցելում ավելի սիրով։ Նա յերենում եր բոլոր հաստրակական յերեկույթներում, բալերում ու պարահանդեսներում։ Նա դիտում եր, ուսումնասիրում և ամեն կերպ աշխատում իր հագուստը, ձևերը, ամբողջ կենցաղը հարմարեցնել արիստոկրատիկ չրչանի կենցաղին։ Յեզ այնքան ընդունակ եր, վոր միքանի ամիս անցած՝ արդեն նրա մեջ կարելի յեր

նկատել ահաղին առաջադիմություն դեպի
գեղեցիկը, նուրբը և հաճելին:

Արդին մամբողջ քաղաքը խոսում էր
Թրանդուլյանների յերեկույթների, ճաշերի,
ձիերի, կահկարասիքի, մանավանդ Մելա-
նիայի բաղմաթիվ տուալետների ու խոշոր
ազգամանունների մասին: Յերբ նա, Ժորժիկին
կողքին նստեցրած՝ բոննայի հետ սեփական
կառքով անցնում եր քաղաքի գլխավոր փո-
ղոցով, հարյուրավոր աչքեր նախանձով ու-
ղեկցում եյին նրան բարեներով: Իսկ Մելա-
նիան դիտեր այդ բարեներին պատասխանել՝
լստ արժանվույն: Յուրաքանչյուրին ցույց
եր տալիս այնքան ուշադրություն, վորքան
միայն արժանի յեր համարում: Նա ընդու-
նակ եր հարգել մարդկանց վո՛չ միայն դիրքն
ու ծագումը, այլև խելքը, ճաշակն ու քաղա-
քավարությունը: Նրա ծանոթների շրջանն
ընդարձակ եր և բաղմատեսակ: Զմեռվա կի-
սին արդեն նրա հյուրասենյակում վաճառա-
կանների կանանց հետ կարելի յեր տեսնել

բանկիրների ու չինովնիկների կանանց, յեր-
քեմն նաև այս կամ այն իշխանուհուն:

Ամսոնը դեմ չեր դրան, թեև հոգու
էորքում չատ ել չեր համակրում նոր ծա-
նոթներից վոմանց: Բանկիրների ու չինով-
նիկների հետ նա առաջ ել բարեկամություն
ունեցել եր, իսկ իշխանների հետ չդիաեր
ինչպես վարովել: Յերբեմն իրեն զգում եր
չատ անհարմար վիճակի մեջ: Մեկ մեկու յե-
տեից նրա տնից վանդվում ելին այն սովո-
րույթները, վորոնց հետ կապված եր իր
սաղմով, և մտցվում նորերը: Բայց նա
դարձյալ չեր բողոքում, և լուս հպատակ-
ուում եր Մելանիայի պահանջներին: Վախե-
նո՞ւմ էր: Վոչ, նա յերկշուռ չեր: Կամքի ուժ
չունե՞ր: Վոչ. փալառ մարդ չեր, յեթե կա-
մենար, կարող եր առեն ինչ տակն ու վրա
անել և նորից վերադառնալ նախկին կենցա-
զին:

Նա սիրում եր Մելանիային, սիրում եր
վեց տարի նրա հետ կենակցելուց հետո, ով-

բում եր մանավանդ այժմ, յերբ Մելանիան
որեցոր գեղեցկանում եր ու կենդանանում ։ Ահա
նրա անտրտունջ հլության միակ պատ-
ճառը :

Զարմանալի էրան. միքանի ամսվա ձեզ
այդ կենն այնքան փոխվել էր, վոր Սամսոնը
առշում եր, զիամլով նրան։ Դա այնու-
առաջիւ համեստ, ամոթիած Մելանիան-
չեր։ Մի ձմեռվա ընթացքում ցույց տվեց
այնչափ համարձակություն, յեռանդ, կեն-
տական ուժ, վորչափ ցույց չեր տվել դուցե-
ամբողջ կյանքում։ Տեղափոխվելով մի շրր-
ջանից մի ուրիշը, կարծես, նոր մթնուրափ
հետ չնչում եր նոր վսդի, նոր աշխարհա-
յացք, նոր զգացումներ։ Նրա թմրած եյու-
թյունը արթնացել եր և արտահայտում եր-
իր բնական ուժը, վոր յելք չեր գտել նախ-
կին միջավայրում։ Այսեղ, ծննդավայրում
կային զանազան կաշկանդող պայմաններ—
զոեհիկների բամբասանքները, ազդականների
ծաղրը, ծնողների չքայլորությունը։ Այսեղ

թե՛ նրա և թե՛ Սամսոնի անցյալի հետ վոչ
վոք ծանոթ չեր: Այստեղ ընդունում եյին
նրանց այնպես, ինչպես կային այժմ—հա-
րուստ և ժամանակի ազգեցությամբ այնչափ-
առաջիած ու հզկված, վոր կարող եյին սամեն-
չընան մտնել և խորթ չթվալ:

Սամսոնը, տեսնելով կնոջ մեջ այս ար-
ժամանական առաջադիմությունը, ալելի ու ա-
զելի յեր սիրահարվում նրա վրա: Այդ հի-
սունուչորս տարեկան մարդը մինչև հիմա
ըստ արժանվույն չեր գնահատել իրենից
յերեսուն տարով փոքր կողակցին և, կար-
ծես, այժմ զդում եր իր սխալը: Նա պարծե-
նում եր մտքում Մելանիայի գեղեցկու-
թյամբ, սալոնական ձիրքով և վարվելու
չնորհքով: Նա ուրախ եր նրա յերիտասար-
դությանը: Սակայն, այն հանդամանքը,
վոր ինքն այդ կնոջից յերեսուն տարով մեծ
է, նրա մեջ հզացրեց մի նոր, տակավին ան-
ձանոթ, մի անտանելի զդացում:

Նա սկսեց խանդել: Խանդել ալելի ու ա-

վելի, յենթարկվելով այն մտքին, վոր վա-
զուց նրան պատճառում եր ծանր հողս...

II

Իրըն դդաստ, խելացի և հեռաաես մարդ
Սամսոնն իր կասկածները դեռ թաղցնում էր:
Յեվ առիթ ել չուներ խանդելու: Գիտեր,
վոր խիստ անարդար կլինի, յեթե բացարձակ
հայտնի Մելանիային՝ թե վախենում է նրա
այժմյան կենսասիրությունից: Կար և ՞ի
ուրիշ հանդամանք. նա չեր ուզում նախանձու-
միւտ ու կասկածուս ասիացի համարվել վոչ
կնոջ և վոչ մանավանդ. ոսարների աչքում:
Միենաւյն ժամանակ չեր ուզում ցույց տալ,
թե վստահ չե սեփական ուժերին կամ կնոջ
հավատակըմությանը:

Յեվ ոյսպես, նա լռում էր: Բայց տանջ-
վում էր, և այս տանջանքը, նոր միայն
սկսված, արագ-արագ զարդանում էր: Տես-
նելով Մելանիայի հետզհետե թարմացող ու
գեղեցկացող գեմքը՝ յերբեմն յերկյուղից

ցնցվում եր։ Զե՞՞ վոր մի որ, վերջապէս,
այդ նորաբաց ծաղիկը կարող ե յերեսովլք
տալ նրա տարիքը։ Մի՞թե կարելի յէ բնու-
թյունը բռնաբարել շարունակ և մնալ անպա-
տիժ։ բոլորովին անպատիժ։

Յերբ նա անխոհեմաբար, կուշտ ճաշից-
հետո, սեղանատանը կամ ննջարանում (մա-
նավանդ այսաեղ) գրկում եր Մելանիային,
այնպիսի մի ցնցում եր արտահայտում յե-
րկտասարդ. կնոջ կրակոտ մարմինը, վոր
Ասմառնը ուղղակի սարսափում եր։ Այնպէս,
վորպես մարդ կարող ե սարսափել, յեթե
ձեռը վերցնի մի դեղեցիկ իր և հանկարծ-
դղա, վոր նո լեցուն ե դինամիոով։ Այդ սի-
րուն աչքերի այբով շողերը բորբոքում ելին
նրա հնացած արյունը, բայց և ասեղների
ովես ցցվում նրա սրտի մեջ։ Այդ կարմրա-
խայտ հյութալի շրթունքների ու նուրբ պըն-
չերի գողոցը շարժում եր նրա մաշված կիր-
քը, բայց և ցավ պատճառում նրա ուղեղին։
Այդ կլորիկ ու զեղակաղմ կրծքի բարախու-

Պ 107

մը հրահրում եր նրան, բայց և սարսուռ
ազդում նրա մարմնին։ Այո՛, Մելանիան բո-
լորովին նախկին Մելանիան չե, այն, ինչվոր
եր ընդամենը կես տարի առաջ։ Նա վառվել
ե ինքն իր մեջ և այրվում է ինքը իր հրով։
Ա՛յս, յեթե Սամսոնը յերեսունուհինդ տա-
բեկան լինել։ Ի՞նչ ողուտ, վոր տակավին
առողջ ե ու թարմ՝ իր տարիքի համեմատ։
Ի՞նչ ոգուտ, վոր այսոր ել դեռ յերակների
մեջ զգում ե յերիտասարդական արյուն։ Այ-
նուամենայնիվ նա ծեր ե և միայն ինքն
զգում, թե վորքան ծեր է... Նա հիսունու-
չորս տարեկան է, և հենց այն միտքը, թե
քսանութ տարով մեծ է կնոջից, կարող է
թունավորել Մելանիայի կյանքը։

Մի անգամ միջորեյին, նախաձաշից հե-
տո, յերբ գինին փոքր ինչ ներգործել եր
Հյամսոնի վրա, հանկարծ ուատանեկական աշ-
խույժով փաթաթվեց Մելանիայի պարանոցին
և սկսեց անվերջ համբուրել նրան։ Մելանիան
ճիգն արավ և կարողացավ դուրս սլկել նրա

զլրկից : Սամսոնը աչքերը հառեց նրա յերեսին : Ա՛խ, վորքա՞ն դեղեցիկ եր յերիտասարդ կինը այդ պահին, ի՞նչպես սազում եր նրան դարնանային թեթև հագուստը յուրաց մանիշակի գույնով ու սպիտակի մետաքսոյա դանթելներով : Նրա դեմքի գծերն ավելի ելին նրբացել : Կանացի հրազդոյրը բուրում եր նրա սմբողջ կերպարանքից, վորպես մի քաշող մաղնիսական, մի արրեցուցիչ ուժ :

Սամսոնը չկարողացավ իրեն զսովել, նորից հարձակվեց մի քանի քայլ հեռու կանգնած Մելանիայի վրա : Այս անդամ կինը ձեռները հորիզոնաձև տարածեց առաջ՝ պաշտպանվելու համար : Նրա լսոյն թերը յետ քաշվեցին . բացվեցին նրա փափուկ բազուկները մինչեւ արմունկները, և թարմ կաշվի նրբիկ սպիտակությունը ավելի դրդուց Սամսոնին : Սակայն, այն ի՞նչ անսովոր ժպիտ եր, վոր սահեց Մելանիայի շրթունքներով, և ի՞նչո՞ւ նրա աչքերը փակվեցին . . . կիրք եր արդ-

յոք այդ, թե սատնություն, մի՛ դուցե ատելություն, մի՛ դուցե...

Սամսոնը մի քայլ յետ կանգնեց և հանկարծ հարցեց.

— Մելանիա, դու ինձ սիրո՞ւմ ես:

Նրա ձայնը դողաց: Հարցը նոր եր, անսպասելի: Վեց տարվա ընթացքում Սամսոնը յերբեք մի այդպիսի հարց չեր տվել Մելանիային և այժմ տալիս եր, և այն ել այնպիսի տարորինակ յեղանակով ու հուզված ձայնով: Մելանիան ցնցիլեց ու դունատվեց: Նու չիմացավ ինչ պատասխանի, նա միայն անորոշ ժպտաց և հայացքը դարձրեց դեպի բակը:

— Սիրո՞ւմ ես ինձ,— կրկնեց նույն դողոջուն ձայնը:

Նույն լոռությունը:

Սամսոնը մոտեցավ Մելանիային, յերկու ձեռներով բռնեց նրա ձեռները ու նայելով աչքերին, ասաց.

Համարձակվիր չուլել, աստմհերացույց կոտած :

Ասաց կես ըուրջ և կես կտտակի յեղանակով, բայց ավելի կոչտ, քան մեղմ, ավելի իշխանական, քան բարեկամական տոնավ։ Յեկ իր խոսքերի մեջ ինքն էլ դպաց ինչ-վոր չարագուշակ հնչյուն :

Հուզումը, մանավանդ պղջումը թաղցընելու համար, Սամսոնը դուրս դնաց սենյակից :

Մնալով մենակ՝ Մելոնիան նստեց առաջին պատահած աթոռի վրա և ընկղմվեց մտախոհության մեջ :

«Աիրո՞ւմ ես ինձ», հնչում էր նրա սկզբանցին; Ի՞նչ պատասխաներ: Միթե նա ինքը գիտե՞, սիրում ե, լե չե: Նա մեայի դիսէ, վոր Սամսոնը իր որինական ամուսինն եռուցիչ վոչինչ: Մի մարդ, վորի հետ անխղելի կերպով կապված ե մինչև մահ՝ սկսած տառնույցը տարեկան հասակից: Ծնողները նրան չստիպեցին դնալ այլ

մարդուն, այլ «համողեցին»։ Նրան բացառ-
բեցին բոլոր հանգամանքները. և նա հա-
մաձայնվեց։ Նա հասկացավ, թե դառնալով
Սամսոն Ֆրանդուլյանի կինը, պիտի բախ-
տավորեցնի իր ծնողներին— այսքանն արդեռ
բավական եր։ Վոչինչ հակադրություն չեր
զգում սեփական ճակատագրի և ծնողների
կամ քույրերի ու յեղբայրների բախտի մեջ։
Իր վիճակը ձռւլված եր համարում նրանց
վիճակի հետ։ Յերջանիկ են, ինքն ել յեր-
ջանիկ կլինի. անբախտ են, ինքն ել կան-
բախտանա—ահա բոլորը։ Յեկ յեթե ասում
են, թե Սամսոն Ֆրանդուլյանի հետ անպատ-
ճառ բախտավոր կլինի, կնշանակե ճշմա-
րիտն են ասում։ Ինչո՞ւ չգնար այդ մար-
դուն։ Կյանքը նրա համար մի անծանոթ
աշխարհ էր, ինքը կանգնած նրա տակավին
փակ դռների առջե։ Յեթե սիրող ծնողնե-
րը, բռնելով թեից, դպրոցական նստարա-
նից նրան ուղղակի ամուսնական կյանքի
մեջ մացրին, միայն և միմիւրին հավատալով

և սիրելով նրանց՝ ընդունեց այս վիճակը։
 Բայց ի՞նչ է յեղել նրա ապրուստը այս
 վեց տարվա ընթացքում։ Այն, ինչ վոր
 տվել են մի կողմից ամուսնու դիրքն ու
 հարստությունը, մյուս կողմից մայրական
 բնազդական սերը դեպի իր զավակները։
 Ի՞նչ է այժմ, այս րոպեյին, կյանքը նրա
 համար։ Շքեղ տուալետներ, թանգարին ա-
 ղամանդներ, ձոխ սեղան, նոր շրջան, պա-
 րեր, յերդ, դվարճություն։

Այժմ նրան հարցնում են՝ «սիրո՞ւմ ես»։
 Սիրո՞ւմ ե, արդյոք։ Ո՞ւմ, Սամսոն Ֆրան-
 դուլյանին, այդ… ծերունուն… այդ…
 Ի՞նչ պատասխաներ այդ մարդուն։ Մի՞թե
 առեր, թե մի գառն զաղտնի կսկիծ մորմո-
 քում ե նրա սիրտը, յերբ զզալով ինչ-վոր
 ներքին անձանոթ հոգեկան պահանջ, մտա-
 ծում ե նաև իր ամուսնու մասին…։

Փոքրիկ պարտիզում, դայակի հետ խա-
 ղում եր յերկու ու կես տարեկան ժորժիկը։
 Մւլանիան դուրս յեկավ սենյակից, մոտե-

ցամ նրան, դրիեց ու համբուքեց ահսօվար
ջերմությամբ։ Ես հուղված եմ և գլում եմ,
մոր ձմեռայտ վիրջի արեգակի դոլ ճառա-
դայթները իր յերակների մեջ տարածում
են լնչվոր անսովոր ջերմություն, իսկ
սիրաը ճնշվում է... հորդացող արենից,
հաղուրդ չստացող կրծերից...

III

Մի որ, սովորական դրսանքից տուն
վերադասնալով, Մելանիսն աղոթմից լուց,
թե մի տաճանոթ հյուր կա ամուսնու տո-
ռահճատմանյակում։ Միքանի բողի անցած,
յերբ նա, հաղուստը վսկելով, անցով սե-
ղանատուն՝ նախաճաշ անելու, այնուհետ-
պամունք շտաղեց ներկայացնել հյուրին։
Դա Սամոսնի քրոջ մարդու յեղբայրն էր,
աղդանունը Փիրողյան, մոտ յերեսուն տա-
րեկան մի յերիտասարդ։ Նա վոչ տղեղ էր,
վոչ զեղեցիկ, գոչ դեր, վոչ նիշոր, բայց
առողջ դեմքով, ուրախ աչքերով։ Հաղած

Եր. սեադու յն, յերիայն «վիտիակա», կյուրակ վեհշերում, մոխրաղույն մարտիք, տակովառ ոսրծ շաղիկ՝ բարձր ոճիքով, վորի ծյունային սպիտակությունը խիստ ներդաշնակում էր նրա դեմքի տակարգին մարմ դույնին և փոքր ինչ կարմրադու յն ականջներին:

Սամսոնի բացառություննեց յերեաց, վոր Փիրուղյանը տար տարի բացակա և յեղել Հայրենիքից, մեծ մարտիք ժամանակին անց է կացրել Պետքրուցքում։ Այսեղ նու, «Ճիքանի Հանդաժմոնքների պահանառով» (Փիրուղյանը դլախիր թերեց կրծքին, արտասանելով «յերեխայություն»), սովորված, թողել է Համալսարանը և մտել ծոռայության ինչ-վոր յերկաթուղու վարչության մէջ։ Սամսոնը նրան շատ անդամ է Հանդիպել մայրաքաղաքում և Համանել և ու սիրել նրան։ Հուառվ է, վոր Մելքնիան էլ կհամանի, յերբ կճանաչի։

Հայտնից, վոր Փիրուղյանը պաշտանը

թողել եւ և յեկել եւ կովկասում հաստատվի-
լու :

— Աւզում եւ Բաղու դնալ, յես խոր-
հուրդ չեմ տալիս, — ասաց Սամսոնը, —
տասը տարի Պետերբուրգում ապրելուց հե-
տո, մարդ չի կարող այդ քամու ու փոշու-
մեջ ապրել :

Փիրուղյանն ասաց, թե մայրաքաղաքի
կյանքը ձանձրացրել եւ իրան, թե ժամանակ
եւ հիմա լուրջ գործով զբաղվելու, թե վըճ-
ռել եւ հարստանալ եւ ուզում եւ նավթային
արդյունաբերությունը «ուսումնասիրել» :
Մերանիան հետաքրքրվեց նրա անցյալով իր-
բեկ ազգականուհի, և Փիրուղյանը սկսեց
հաճույքով պատմել մայրաքաղաքի թատ-
րոնների, ցիրկերի, ելեկտրական կառքե-
րի, ձիարշայների մասին : Նա առանձին աշ-
խույժով իսոսում եր վելոսիպեդիսմերի
մասին, ինքը ճարպիկ վելոսիպեդիստ լինե-
լով :

Յերբեմն նրա հայացքը կանգ եր առ-

նում Մելանիայի դեղեցիկ դեմքի վրա։ Դիտող մարդը կարող էր նրա աչքերի մեջ կարդալ ինչ-վոր ներքին գոհունակություն։ Թվում էր, վոր նա հիացած էր իր ազգսկանի կնոջ սիրունությամբ և, միենույն ժամանակ ուրախ եր, տեսնելով մարդու ու կնոջ հասակների մեջ ահապին տարրերություն։ Իսկ Մելանիան սեղանի քով ուշադիր էր դեպի հյուրը իրիւ բարեբարու տանտիվին։ այսքանը միայն։ Բայց այսոր առաջին անդամ լուրջ համեմատում էր Սամսոնին մի ուրիշ տղամարդի հետ և... հաղիսկարողանում զսպել հառաջանքը։ Վորքա՞ն Փիրուղյանը նսեմացնում էր իր ներկայությամբ Սամսոնին։ Մեկից բուրում էր առնական ուժը իր բոլոր յեռանդով, մյուսի մեջ կյանքն արդեն անցել էր իր վառվուռն շըլանը, և անցել վաղո՞ւց։ Գուցե Փիրուղյանը, Սամսոնի տարիքին հասնելով, կըկնակի ծերանա, բայց այժմ նա ունի մի

Հրապույթ, վորից առ միշտ դրկվել և Սահսրունը:

Եթեանութ տարի՛, տեր տոտվածք», մը-
տածեց Մէլանիան, շրթունքները սեղմելով
տուամների տուկ: Այս արդեն չափից դուքս
է, այս արդեն գեմ և բնաւթյան բոլոր ու-
րինքներին, և միայն Մէլանիան և զդում,
ին վարչան դեմ և...

Դարնան մոտենալով՝ ԱՌանիան որե-
ցոր դառնում եր մտախոհ ու լուրջ: Այժմ
նա այլեւ չեր հետաքրքրվում սալօնոցին
կյանքով: Նա նույն իսկ ճանձրացնել եր այդ
արխատոկրատիկ Համարված շրջանի կեղծ
ու սկատիր - կանոններից ու հիանթափոխել,
լիչովես մի քերեխառ արդեն ծոնով խաղալի-
քի վերաբերմամբ:

Նա նկատելու չափ գունատվել եր,
բայց աչքիցի հուրը քանի դնում՝ սաստկա-
նում եր: Նա խոսում եր սակավ, աշխատաւմ
եր Ստմանի հետ յերես առ յերես չմնալ,
փախչում եր, վորքան կարող եր, նրա գրդ-

վանքներից՝ մանավանդ համբույրներից։ Նա
ավելի ու ավելի ամփոփում եր ինքն իր
մեջ։

Շարաթը յերկու անգամ նա Փիրու-
դյանին հյուր է ընդունում և ճաշին պա-
հաւմ— Սամսանի ցոնկությամբ։ Վարչում
եր նրա հիմ, իբրև աղբական, ողարզ, հա-
մարձակ, բայց առանց վորեն ժաերմու-
թյան, միշտ պահելով իր և նրա մեջ վորոշ
չափի տարածություն։ Նրա մեջ կառուր-
վում եյին դարձանալի վորփախություններ։
Դեռ մի տարի առաջ մի հասարակ կին եր
գրեթե մեկն իր նախկին շրջանի կիսութեմ-
բած եցակներից։ Տեղափախվելով ուրիշ
քողաք, հանկարծ վոխովեց նոր կյանքի
տապարիկում, դարձալ սոլոնային կին։
Այժմ նա լրջամիտ եր և մտախոհ, վորաչեա
թի նրա զլուխը լեցուն եր համամարդկային
հոգևորի։

Յեթ այսքան վորփախություններ մի
տարիտ ընթացքում։

Սամսոնը ուրախ եր նրա այս վերջին
տրամադրությանը, ավելի քան արիստոկ-
րատիկ ձգտումներին։ Բայց նա չդիտեր,
վոր հանգստությունն արտաքին է, վոր
Մելանիայի մեջ տեղի ունի ինչ-վար փոթո-
րիկ և նրա արյունը ավելի ու ավելի լե-
բորբոքվում, չնայելով ճակատի մռայլին,
յերեսի գունատությանը։

Մի անգամ Սամսոնը տուն վերադառ-
նալով, անմիջապես անցավ ննջարանը, յերբ
աղախնից իմացավ, վոր Մելանիան այնտեղ
է։ Բաց անելով զռները, նա բեկովեց շեմ-
քի վրա։ Նա հանդիպեց մի անսովոր, չտես-
նոված տեսարանի։ Քանի մի քայլ հռուտ,
շքեղ արյումուի առջև, կանդնած եր Մելա-
նիան՝ կիսամերկ, վոտարորիկ։ Նա դիտում
եր իրան վոտից մինչև դլուխ։ Նրա բաց
կուրծքը, սոյիտակ ուսերը նկարվել ելին
արեգակի ջերմ չողերով վողողված սենյակի
մեջ տեղում վորպես մի կլասիկական ար-
ձան, վորպես մեկը Քանովայի ախտաբարու-

բոք ձեռակերտներից : Միայն կենդանի ,
շարժական արձան , վոր շուրջը տարածում
եր հեշտանքի կիզիչ շողեր : Յեվ այս շողերի
մեջ նու լողում եր ինչպես մարմնացած
կերք : Բայց վորպիսի քնքույշ , արբեցու-
ցիչ ու կորուսիչ կերք իր կանացի ամոթ-
խածության մեջ իսկ :

Արյունը խփեց Սամսոնի գլխին , աչքե-
րը մթնեցին : Նա կամացակ վոտների ծայ-
րերի վրա , մոտեցավ յետեից : Նա ուղում
եր գրկել այդ կիսամերկ մարմինը , վոր ի-
րան և միմիայն իրան եր պատկանում , և
իսեղզել իր գրկի մեջ կրքերի բուռն թա-
փով : Մելանիան յերեսը յետ դարձրեց , մի
քայլ հեռու կանդնեց՝ տունց մաղի չափ
չփոթվելու :

— Ի՞նչ ես սնում այդ , — գոչեց Սամ-
սոնը , բարկացած ձայնով :

— Հիանում եմ ինձանով , — պատաս-
խանեց Մելանիան , կարծես քարդուն ավելի
զրդոելու համար :

— Մելանիա, ի՞նչ և պատահել քեզ:
Դու շատ ես վախիեց, դու այդպիսի կըն
չելիք:

Մելանիան սկսեց լուռ հազնվել: Հա-
գուսաբ սփալած եր հատակի վրա տնկարոց,
վորպես անփույթ դերասանուհու ղբեսատե-
րը թատրոնական հանդերձաբանում:

— Մելանիա, այդ քեզ իսկի չի սաղում:

— Ինչո՞ւ:

— Դու հայ կըն ես:

— Հայ կնիկը արյուն չունի, — սկս-
ասիստանեց Մելանիան, հեղնարար ժպտա-
լով:

— Արյո՞ւն, — կրկնեց Ստմոնը, այս
մի հատիկ բարի մեջ զբալով ինչ-վոր չոր և
սոսկալի լմասու:

— Արյո՞ւն, այր, արյո՞ւն:

— Բայց դիտե՞ս ովքեր ունին այդպիսի
արյուն:

— Կոկոսուհիները, — լուսցրեց Մելա-

նիան անփույթ յեղանակով, ժողովելով
ուսին սփոված խիտ մաղերը:

Սամսոնը կաշկանդվեց նրա համարձակությունից:

Մելանիան, թեքվելով, վոր անկողնակավի տակից դուրս բերի հողաթափները, ավելացրեց.

— Ռւբիչներն անում են տղամարդի համար, յես անում եմ ինձ համար: Կործեմ, մի մեծ մեղք չե:

— Մելանիա, այդ... անամոթություն ե...

Մի բարձր արծաթահնչյուն կծու ծիծաղ տարածվեց վասփուկ գտրնանացին մթնոլորտի մեջ, վորապես ծիծեռնակի ծրվալոց:

— Անամոթություն... վոր այլպես ե՛, ինչո՞ւ եյիր ուզում զրկել ու համբուրել: Գրավիչ եյի, այո՞ւ շատկանում եմ. չո՞վոր յերիտասարդ եմ, զեղեցիկ, թարմ, և

դու... ուզում եյիր տիրանալ... Յահսուռ
թյուն...

Նա հանդարտ քայլերով՝ դուրս դնաց,
թւթևակի բարձրացնելով՝ հաղուստի փեշը
յետեից :

Սամսոնը, ապշած նայեց նրա յետեից :
Այդ կնոջ հողաթափերն անդամ տարածում
եյին ախտաշարժ վոգի փափուկ դորդի
վրա...

«Նա ինձ տառամ ե», ասաց Սամսոնը
ինքն իրան վճռաբար :

Նայեց անդիտակցաբար հայելունն և
սարսափեց : Վողորմա՞ծ աստված, այդ կնոջ
համեմատ նա վոչ միայն ծեր ե, այլ և զա-
ռամյալ : Նրա ճաղատ գլուխը, արագ-արագ
ճերմակող ընչանցքը, թուլացած ուսերը,
խոր ընկնող այտերը, բոլո՞րը, բոլորը ար-
դեն ովսել են արտահայտել կենդանի մա-
հացում : Զգո՞ւմ ե, արդյոք յուր յերակնե-
րի մեջ յերիտասարդական արյուն, ինչ-
պես կարծում եր : Վո՞չ, այս սուտ ե, ինչ-

Նախարեյություն։ Նա չի՝ կարող անողոք ժամանակի տուածն առնել։ Ի՞նչ ոգուս կըրքից, յերբ...

Ա՛խ, իւլեցե՛ք նրանից հարստության կեսը, միայն թե պակասացրեք նրա տարիքն ևս կիսով չափ։ Տվե՛ք նրան կյանք։ Վորովհետեւ նա սիրում է Մելանիային և ուզում է նրանից սիրված լինել, վորովհետեւ ուզում է ապրել բառի ընդարձակ մտքով։

«Մի՛թե հայ կինը արյուն չունի՞», հնչում ելին չարագուշակ բառերը Սամսոնի ականջներում։

IV

Ամառվա սկզբին Մելանիան տեղափոխվեց ամառանոց։ Նա չկարողացավ այդ տարի արտասահման դնալ, վորովհետեւ Սամսոնը դրաղված եր։ Քաղաքի մի լավ փողոցում կառուցանել եր տալիս սեփական տուն և ուզում եր մինչև վերջը անձամբ հետեւել շինությանը։

Շաբաթը մի անգամ Սամսոնը դնում եր

ամառանոց և կիրակի որերն անցկացնում
ընտանիքի մոտ։ Յերբեմն իր հետ տանում
եր Փիրուղյանին։ Մելանիան այժմ այլ ևս
մի առանձին ուշադրություն չեր ցույց տա-
լիս հյուրին, միայն նուրբ աչքը կարող եր
նկատել, վոր յերբ տեսնում եր նրան, առա-
ջին վայրկյան աչքերը շողշողում ելին տա-
րրինակ։ Բայց միայն մի վայրկյան, այ-
նուհետեւ դեմքը սքովվում եր այն նուրբ
քողովչ վոր քանի զնում, անթափանցելի եր
դառնում։

Սամսոնը չեր նկատում այդ վայրկենական
փոփոխությունը, և չեր ել կարող նկատել։
Ազդակյական կապի մասին նրա դադարտին
այնքա՞ն մաքուր եր, վար մաքովն անդամ
չե՞ր անցնում, թե Փիրուղյանը կարող ե իր
կնոջ վրա գտն աչքով նայել։ Վերջապես
Մելանիան այնքան քիչ եր հետաքրքրվում
Փիրուղյանով, վոր Սամսոնը յերբեմն մըս-
քում բարկանում եր նրա վրա։ Ի՞նչպես
կարելի յէ սառն վերաբերվել դեպի մի այն-

ոլիսի աղդական, չե՞ վոր ներս և մտնում
թէ չեւ խակույն գրկում և Ժորժիկին, ուսերի
վրա բարձրացնում և ամբողջ ժամանակ
նրան բաց չի թաղնում ձևոներից :

— Մերանիա, — դարձայլ նա մի որ կնո-
ջը, — դու քանի դնում, վատ ևս վարվում
Արտուրի հետ : Զե՞ս հավանում :

— Ի՞նչ հավանելու, չհավանելու բան կա .
Հարյուր աղդական ունիս, նա եւ նրանցից
մեկը :

— Բայց դու իմ մո՛չ մի աղդականի հետ
ոյդպես սառը չես վարվել :

— Զարժե այդ մասին խոսել, լո՞վ :
Մելանիան գրկեց Ժորժիկին և դրեց ծնկնե-
րի վրա : Բաց արտվ գումարարդ պատկեր-
ների մի ժողովածու (Փիրուղյանն եր նվի-
րել Ժորժիկին), ըոնեց փոքրիկ մասիկը և
շրջեցնելով պատկերների տակ, կարդում եր
զանազան կենդանիների անուններ :

Սամանը զդացվեց ընտանեկան տեսա-
բանից :

— Հանաբը մի կողմը, — ասաց նա, — շուտով
Ժորժիկը կարող է այրութեն սովորել:

— Շուտո՞վ, — կրկնեց Մելանիան, դառը
քմծիծաղ տալով, — վո՞չ, դու դեռ շա՞տ պիտի
սպասես:

Սամսոնը չըմբռնեց այս խոսքի մեջ թագն-
դած հեղինանքը:

— Կսաղասեմ, առաջ նա ժաղոալով:

Մի որ, յերբ նա ամառանց յեկավ մե-
նակ, Մելանիան հարցըց:

— Ինչո՞ւ աղջականիդ չբերեցիր:

— Չուզեց դալ:

— Ինչո՞ւ:

— Ե՛, յերեկ, հասկացել ե, վոր դու չես
սիրում իրեն:

Մելանիան չրթունքները թեթևակի կծեց:

— Յեթե հասկացել ե, չատ լավ ե արել:

— Մելանիա, — արտասանեց Սամսոնը հան-
դիմանաբար:

— Նա ինձ բոլորովին դուք չի գալիս: Այո՛,

դուր չի դալիս, յեթե ուղում ես ճշմարիտ
իմանալ:

— Բայց լավ չես անում: Գլուք և նրա հետ
քիչ թե շատ քաղաքավարի վարվել, թե չե—
քույրս կլսի, կվիրավորվի:

— Մի՛թե, —արտասանեց Մելանիան մտա—
խոհ և անորոշ:

— Յես մյուս անդամ անպատճառ հետ
կրերեմ նրան:

Մելանիան իսկույն չպատռիանեց, լուց
մի քանի վայրկյան և հետո ասաց.

— Դո՛ւ գիտես, ազդականը քոնն ե...

Այդ որը նա Սամսոնին թվաց սովորակա—
նից ավելի տիսուր, գունատ, նույնիսկ նի—
ւար: Կարելի յեր կարծել, թե ամառանոցի ո—
դը լավ չի ներդործում նրա վրա: Սամսոնը
հարցրեց.

— Մելանիա, դու առողջ ես...

— Յե՞ս, — կրկնեց Մելանիան, — յես բոլո—
րովին առողջ եմ...

Յել, կարծես, հանկարծակի մի բան հիշելով, նկատելու չափ դրզոված, ավելացրեց.

— Լա՛վ կամես, վոր քո մասին մտածես:

— Ինչո՞ւ, յես ե՞լ բոլորովին տռողջ չեմ:

— Դո՞ւ... այո... տռողջ չես...

Սամսոնը զարժացած նայեց կնոջ յերեսին:

— Մելանիա, ի՞նչ ես ուզում ասել: Ցես տռողջ եմ և միշտ ել տռողջ եմ յեղել:

— Ե՛հ ավելի լավ, շատ ուժախ եմ:

— Այդ ի՞նչ տեսակ ես խոսում, Մելանիա:
Ասա՛:

— Ասե՞մ, — կըկինեց Մելանիան՝ հանկարծ մի համարձակ հայացք ճգնելով ամուսնու ոչքերի մեջ:

— Ասա՛:

— Դու սրահանջո՞ւմ ես:

Մելանիան, գլուխը թեքելով իրծքին, սկսեց մատներով նյարդային արագությունը սրտեցնել սեղանի վրա դրած ծխախոտատուիր:

— Բայց ավելի լավ ե չիւսուէլ այդ մա-

սին, — ասաց նա վերջապես, առևիլ սեղանին
զարկելով՝ վստրի կանդնեց :

Սամսոնը քանի դժում, ավելի ու ավելի յեր
հետաքրքրվում :

Կնոջ խռոքերի մեջ զգում եր մի հիտին
թռւնալի միտք, մի միտք, վոր անշուշտ վա-
ղուց և Մելանիային զբաղեցնում : Նա ինքն
այդ միտքը բացատրեց այլ կերպ :

— Մելանիա, յեթե չես տսիլ, կնեղանամ :
— Ես, շատ լավ, վոր ստիպում ես կա-
սեմ : Դու հիվանդ ես :

Մի վայրկյան Սամսոնը կարծեց, թե կինը
կատակ և անում, թեև սպասում եր լսել
նրանից հենց այդ պատասխանը :

— Չես հիվանդ եմ, յե՞ս, — դոչեց նա
ծիծաղելով :

Յեզ նրա ծիծաղը հնչեց այնքան թառամ,
ոյնքան ծերունական, վոր Մելանիան ակամա
ցնցվեց :

— Յես հիվանդ եմ. յե՞ս, — կրկնեց Սամ-
սոնը այս անդամ լուրջ, — ասա՛, ինչո՞վ :

— Թո՛ղ, իւ սեր աստծու...

— Հիմա չեմ թողնիլ, մինչև վոր բոլորը
չասես: Տևանում եմ, դու իմ մասին զատ
կասկած ունիս: Դու ինձ զրպարտում ես.
Կիտե՞ս, զրպարտում ես... յես կյանքումս
հիվանդ չեմ յեղել...

— Այս... կարելի յե... բայց յես այդ չեյի
ուզում ասել...

— Ուրեմն ի՞նչ, աս'ա, ի՞նչ ե իմ հիվան-
դությունը...

Մելանիան զլուխը հանդարտ բարձրացրեց,
ուղիղ նայեց ամուսնու յերեսին և արտասա-
նեց.

— Ծերություն...

Վորքա՛ն վիշտ, վորքան կծու հեղնանք
կար այս մի հատ բառի մեջ: Վիշտ՝ Մելա-
նիայի, հեղնանք՝ Ամմոսնի համար: Յեկ մի
վայրկյանում հիսունուչորս տարեկան մարդը
ծերացավ սամբողջ տասը տարով:

Ահա՛ այն վայրկյանը, վորին վերջին ժամ-

մանակ սպասում եր ամեն ոք, ամեն ժամ, և
սպասում ներքին սարսափով :

— Յես ծե՞ր եմ, — կրկնեց նա անեռանդ
ձայնով և մի տեսակ հուսահատությամբ :

— Այո՛, դու ծեր ես, միթե չգիտեյի՞՞ը :

Սամսոնը թուլացած ընկղմվեց ըաղկաթոռի
վրա :

Մելանիան կամացուկ դուրս դնաց սենյա-
կից . . .

Վ

Անգո՛ւթ կին . նա չկամեցավ գեթ սակավ
ինչ մեղմացնել յուր անողոք խոսքերի ուժը :

Մեղմացնե՞լ, բայց ինչո՞ւ . միթե նա սո՞ւո
ասաց կամ զրպարտեց : Նա ասաց ա՛յն, ինչ
վոր ճնշում եր հոգին, թունավորում կյան-
քը . ասաց զուտ ճշմարտությունը : Սակայն,
ի՞նչ . թեթևացա՞վ նրա հողին : Ո՞ , վոչ,
ընդհակառակը, այժմ նա ավելի յէ մտա-
ծում յուր ճակատագրի մասին, քան մտա-
ծել եր մինչեւ այդ պահ :

Ինչո՞ւ խարվեց : Մի՞թե նրա ծնողները
 կատարյալ բռնակալներ , եյին : Բնա՛վ : Նրան
 տրված եր վորոշ չափով ազատություն , դոնե
 պարմանական ազատություն , վորովիսին «ժա-
 մանակակից» ծնողները տալիս են որիորդնե-
 րին : Նախ նրան ծանոթացրին Սամսոն Ֆրան-
 գուլյանի հետ , թույլ տվեցին մի քանի անդամ
 հետք խոսել կլուբում , թատրոնում , հետո
 միայն սկսեցին «Համոզել» , այո , համոզել
 և վոչ թե հարկադրել : Յեվ վորովիսի՛ մեղմ
 յեղանակով համոզեցին : Նա կարող եր մեր-
 ժել , յեթե կամ ենար : Վոչ վոք նրան զոռով
 չեր ամուսնացնիլ : Շա՛տ-շա՛տ , ծնողները
 մի փոքր կվշտանային , մի փոքր կնախատեյին
 նրան , հետո ... կլույին : Բայց նա չմերժեց .
 թո՛ղ ուրեմն այժմ կրի յուր սխալի հետե-
 լանքները : Թող նա կենակցի մի ժարդու
 հետ , վորը յերեսուն տարով մեծ և իրենից
 և վորին չի սիրում : Զի՞ սիրում : Վոչ , այդ
 սխալ մ , ուղում և սիրել և չի կարողանում :
 Նա հարդում և այդ ժարդուն , համարում ե

նրան արժանավոր ամուսին։ Ամուսին, վոր սիրում ե նրան ինչպես աստվածուհու, կտուարում ե նրա բոլոր ցանկությունները, բոլոր քմահաճույքները, ինչպես սարուկ։

Բայց միթե այսքանը բավակա՞ն եր։ Իսկ ուր թաղցնի Մէլանիան նոր հղացած կյանքը, նրա բնական պահանջները, յերիտառարդ սրտի ավշունը, վոր այրում ե նրան ամառային արեգակի ջերմության չափ, տաշածվելով ամբողջ մարմնի մեջ, վորպես հաւած մետաղ։ Ի՞նչպես զսպի սիրելու ջերմ փափաղը։ Սիրելու վոչ թե մի ուժասազատողամարդի, այլ մի տաքարյուն յերիտառարդի, վոր կարողանար հաղուրդ տալ նրա բոլոր զգացումներին, վոր նրա չափ ոժուղած լիներ կենսասիրական հրով։ Բռնություն, կատարյա՛լ բռնություն։ Նա ինքը դեռ քսանչորս տարեկան չկա, դեռ նորանոր ե միայն հասկանում, թե կինը նախ ե առաջ ինչու համար ե ստեղծված։ Յեվ ստիւլված ե զրկել ու համբուրել, կամ զբարձրել և

Համբուրվել մի հնոտիի հետ; Յեվ դեռ Մելանիային նախանձող կանայք կան:

Ոգոստոսի վերջին՝ Մելանիան վերադարձալ քաղաք :

Սեփական տունն արդեն պատրաստ եր. Մամսոնն ընտանիքն ուղղակի այնտեղ տեղափոխեց :

Եե՛ղձ մարդ. վորքա՞ն եր աշխատել նոր կացարանին կարելույն չափածոխություն ու շուք տալու: Շատ կահ-կարասի նոր եյին բերել տրվել արտասահմանից, վորովհետեւ հները չեյին համապատասխանել սենյակների շքեղությանը: Պատերը յուղաներկ ներկված, դռները թանգաղին կարմիր պիայտից, լուսամուտները շրջափակված վոսկեղոծ սյուների մեջ—ահա դլխավոր դահլիճը: Հարկավ, մնացյալ սենյակներն ել համապատասխան շուք ունեյին: Ախոռատանը խրխնջում եյին մի զույդ ձիեր, այս անդամ մոխրագույն, պոչերը կտրած: Գլխավոր մուտքի մոտ կաղնած եր պարթեահասակ վեյցար, իսկ

մարմարիոնյա սանդուխքը զարդարված եր
դեղեցիկ արձաններով ու թանդարձին տրո-
պիկական բույսերով :

Յեկ այս բոլորը Մելանիայի, միայն Մե-
լանիայի հաճույքի համար . այնքա՞ն եր սի-
րում նրան Սամսոնը : Այն ինչ ինքը՝ Սամ-
սոնը վորքա՞ն փոխվել եր այս վերջին յեր-
կու շաբաթվար ընթացքում : Վոչ միայն նի-
հարել եր, այլև ավելի ծերացել, այլ և
մեջքից բավական կորացել : Այժմ նա լուռ
եր, վորպէս անշարժ ջուր : Մի միտք ար-
ճիճի պես ծանրացել եր նրա հոգու վրա :
Այդ նույն միտքն եր, վոր վերջին տարինե-
րը հալածում եր նրան և վորից այժմ ա-
զատվելու հնար չեր գտնում...

Քաղաք բերելով Մելանիային, նա հարց-
րեց՝ արդյոք առաջիկա սեղոնին ի՞նչպէս ե-
կամենում կարգադրել կյանքը : Պիտի ան-
ցյալ ձմեռվա պես դռները բա՞ց անի բազ-
մաթիվ ու բազմատեսակ ծանոթների առ-
ջե, թե՞ ուզում ե ուրիշ կերպ ապրել :

Մելանիան հիադած եր նոր բնակարանով
ու նոր կահ-կարասիով, բայց վոչ այնպես,
ինչպես մի տարի առաջ եր հիանում ամեն
մի շքեղությամբ:

Նա պատուխանեց— վճռել եմ այսուհետեւ
ուրիշ կերպ ապրել:

— Ի՞նչպես:

— Ուզում եմ հասարակական գործերով
զբաղվել: Երավունք կտա՞ս:

— Արա՛, ինչ վոր սիրտդ ուզում ե, միայն
թե չտիրիս: Յես չեմ սիրում քեզ տիտր
ուեսնել:

Այս բոլորովին անկեղծ եր. Սամսոնը չեր
կամենալ Մելանիային տիտուր տեսնել կամ,
ամելի ճիշտ, վախենում Եր նրա տիրությու-
նից: Բարվոք կհամորել նրան տեսնել գործե-
րով զբաղված, քան ինքն յուր մեջ ամփոփ-
ված: Պարապությունը, նրա կարծիքով, կա-
րող եր յերիտասարդ կնոջ տանել դեպի ով-
զիտե ինչ վատանդավոր մաքեր...

Մելանիան սկսեց զբաղվել հասարակական

դործերով։ Վոսկի բանալիով բաց արավ յուր
 առջև բողոք այն հիմնարկությունների գոնե-
 րը, ուր միայն կտրող եր մուտք ունենալ
 կինը։ Սամսոնը զոհեց մի խոշոր դուժար,
 Մելանիան ընդունվեց որիորդական գիմնա-
 դիոնի պատվավոր հոգաբարձու։ Քանի մի
 ուրիշ նվերներ յերիտասարդ կնոջը իրավունք
 ովեցին այս կամ այն բարեգործական ընկե-
 րության խորհրդի անդամ ընտրվել։ Այս բո-
 լորը չոյում եր Մելանիայի սնավառությունը
 և շարժում շատերի նախանձը։ Մկնեցին նրան
 բամբառել, անվանել Parvenue, չարախոսել
 նրա վո'չ միայն դործունեյությունը, այլ և
 անձը, մերադրելով նրան հաղար ու մի վատ
 ձգտումներ։ Իսկ նա վոչ վոքի վրա ուշ չեղ
 դարձնում։ Նա խելոք եր և վոչ զուրկ տաք-
 տից, գիտեր և' արհամարհել մարդկանց, և'
 վակել նրանց բերանը յուր սիրալիր վարմուն-
 քով։ Մեկին հաղթում եր յուր ճաշերով ու
 ընթրիքներով, մյուսին զրոսանքի համար առ

ուաջարկելով յուր չքեզ կառքը, յերբորդին
ուղղակի այցելություն անելով և այլն:

Որը մինչև յերեկո զբազլիած էր: Գրում եր
նամակներ, ցրվում եր այս կամ այն բարե-
գործական յերեկույթի տոմսակներ, պատ-
վերներ եր առախ, պատվերներ կատարում և
հոգնում: Մոռանո՞ւմ եր յուր վիճակը. այ-
սինքն ա'յն, ինչի պատճառով իսկապես զբազ-
լում եր հասարակական դորձերով:—Վո՞չ, նա
խարում եր ինքն իրան: Բայց ջանք եր անում
մոռանալ: Այլիի՛, նա անկեղծ ցանկանում եր
սիրել Սամսանին: Այս նպատակով բռնարա-
րում եր ինքն իրան, իսեղդում յուր մեջ
շատ ապրինի, վտանգավոր, բայց հաճելի
զգացումներ: Նա հեռու եր պահում իրան
տղամարդկանց շրջանից, վորապեսզի չվրդովի
վոչ յուր և վոչ Սամսոնի արյունը: Իսկ
կանայք առաջլա պես վայելում եյին նրա
ընկարծակ հյուրասիրությունը:

Սամսոնը վոչ մի նկատողություն չեր

անում նրան այս կամ այն քայլի մասին և
միշտ կրկնում եր .

— Արա՛ , ինչ վոր քեֆդ ե :

Բայց այս խոնարհության մեջ Մելանիան
ակամա զգում եր ինչ-վոր վատ բան .
ինչո՞ւ — ինքն ել չղիտեր : Մի որ նա հարց-
րեց ամուսնուն :

— Դու բարկանո՞ւմ ես ինձ վրա :

— Ո՞վ ասաց :

— Ինձ այնպես ե թվում :

— Իզուր : Յես քեզ վոչինչ , վոչինչ չեմ
արգելում , արա՛ , ինչ վոր քեֆդ ե :

— Դու ունիս իրավունք արգելելու :

— Բանի՛մ , բայց չեմ արգելում :

— Իսկ յես ուղում եմ , վոր դու ինձ շատ
ել աղատություն չտաս :

— Հա՛ , հա՛ , հա՛ , — ծիծաղեց Սամսոնը , —
դու մի՛ կարծիր , թե յես քո աղատությունից
վախենում եմ : Վոչ , յես վախկոտ չեմ :

Նա խոր նայեց կնոջ աչքերին : Մելանիան

դլուխը թեքեց կրծքին, մի քիչ կարմրելով։
Խոսակցությունը սրանով եւ վերջացավ։

VI

Փիրուղյանը հաճախ այցելում եր Սամսոն
Ֆրանկուլյանին։ Նկատելով, վոր ազդականը
անդործ տիրուած եր, հանդիմանուած եր նրան։
Ահապին դրամագլուխը դրել և բանկ և ձեւ-
ները անշարժ նոտել։ Ինչո՞ւ չի սկսում մի
նոր ձեռնարկություն և իր կյանքի ողակառը
լրացնում։

— Ծերացել եմ, — պատասխանեց մի որ
Մամոնիը կտտակով, բայց ակամա հառաջե-
լով, — յեռանդ չունիմ նորից դործեր սկսելու։

— Ծերացել, — կրկնեց Փիրուղյանը, — ուռու-
ձեզ ծե՞զ եք համարում։ Դուք ինձանից յե-
րիտասարդ եք։

— Քանիքուարով ձեղանից մեծ էմ, դի-
մե՞ք՝ ինչ ասել և քսաներկու տարին մարդու
կյանքում։

— Տարիքը զատարկ բան ե, գլխավորը
մարդու ուժերն են ու սիրութը:

Նա շատ լավ գիտեր, թե վորքան կործա-
նիչ ե ժամանակի ուժը, թե վորքան մար-
դիկ խարում են իրենց, յերբ ասում են. «Թե
յես տարիքով ծեր եմ, բայց սրառվ, հոգով
ու ուժով յերիտասարդ եմ»։ Սակայն խորա-
մանկ եր, ճանաչել եր աղդականի թույլ յե-
րակը և աշխատում եր շոյել նրան։ Ահա
ինչու Սամսոնը խսկապես սիրում եր նրան։
Այդ յերիտասարդի մոտ նա շատ ել չեր
զդում յուր ծերությունը։

Ամեն կիրակի, յերբեմն նաև շարաթամի-
ջին, Փիրուղյանը ճաշում եր Ֆրանգուլյանի
տանը։ Գալիս եր ճաշից շատ առաջ և հեռա-
նում ճաշից շատ հետո։ Յերբեմն Մելանիա-
յին հանդիպում եր տանը մենակ, և միշտ
աղդականի սղարդ հարգանքով եր վերաբեր-
վում դեպի նա։ Այն ինչ, Մելանիան շարու-
նակ ցույց եր տալիս անտարբերություն, յեր-
բեմն նույնիսկ սատնություն։ Միկնույն ժ...
Մելանիա— 4

մանակի, այլ ևս Սամսոնի հետ չեր խոսում
Փիրուղյանի մասին։ Կարծես, նրա համար
միւնուցն եւ կա՞ այդ մարդը, թե՛ չե։ Բայց
և այնպէս, այժմ ել նա՝ յերբեմն մտքում հա-
մեմատում եր Սամսոնի հետ և միշտ մտա-
ծում։ Ենչո՞ւ Սամսոնը նրա հասակի չե։
Ա՛յն, այն ժամանակ Մելանիան յերջանիկ կը-
լիներ։ Իսկ այժմ նրա արյունը չի հուզվում
Սամսոնի մերձավորությունից և այս կատա-
ղեցնում և նրան։ Մինչդեռ հուզվում ե, յերբ
մի վայրկյան սղատություն և տալիս իրեն
և դիտում Փիրուղյանի առնական ուժով
տողորված դեմքը, նրա աչքերի յերիտա-
սարդական վայլը։

Մի որ Փիրուղյանը յեկավ ա՛յն միջոցին,
յերբ Սամսոնը տանը չեր և շուտ ել չոլիտի
յերադառնար։ Մելանիան ընդունեց նրան
ամուսնու կարինետում և ընդունեց ավելի
սառը, քան ամուսնու ներկայությամբ։

— Սամսոնը տանը չե, — շոապեց ասել

— Ավասո՞ւ, — արտասանեց Փիլուղյանը
և խորը հայացքով նայեց Մելանիայի աչ-
քերին:

Այդ հայացքը թե՛ բարկացրեց և թե շվա-
թեցրեց Մելանիային:

— Գո՞ւծ ունեյիք հետը, — հարցրեց նա:

— Այո՛ :

— Այսոր շատ ուշ կդա տուն: Ճաշի յե
հբառիրված:

Նա կամենում էր հյուրին ճանապարհ
դնել, բայց հյուրը նրա ձեռի թեթև շար-
ժումից ոգտվելով, նստեց Սամսոնի զրահ-
ղանի քով: Նա միանդամայն կատաղեցնում
էր Մելանիային իր յերեսի թարմ գույնով,
իր աշխույժ ձեւը ու, այն մարմնավոր տժով,
վոր արտահայտվում է յերեսունչորս տարե-
կան սղսմարդի յուրաքանչյուր շարժմամբ:

— Դուք ինձ ներեցե՞ք, յես ձեղ կթողնեմ
մենակ: Հյուրասենյակում ինձ ապասում է
վորբախնամ ընկերության վարչության նա-
խագահը:

— Անդրեմ, խնդրեմ, — չփոթվեց Փի-
րուղյանը, — զնացեք, զբաղվեցնե՞ք բարի
դործերով, իսկ ինձ թույլ տվեք մի փոք-
րիկ նամակ գրել Սամսոն Պետրովիչին:
Գործը շատ կարեռ է, հետաձգել չի կա-
րել:

Մելանիան հեռացավ: Հյուրը մնաց մե-
նակ: Վերցրեց մի թերթ վոստի թուղթ
և դրիչ: Գրեց միքանի առղ, հետո դրիչը
ցած դրեց և, թիկն տալով բաղկաթուին,
ընկավ մտածմունքի մեջ:

Արդեն միքանի ամիս եր, նրա միտքը
զբաղված եր Մելանիայով: Նա չափազանց
հավանում եր յերիտասարդ աղջականուհուն
և հավանել եր հենց առաջին տհանելով: Նրա
հաճախակի այցերի դադանի շարժառիթը տի-
կինն եր: Նա չեր չփոթվիլ, յեթե Մելա-
նիան մինչև անդամ բոլորովին չխոսեր նրա
հետ: Տասը տարի պտտելով մայրաքաղաքի
շրջաններում, բավական ուսումնասիրել եր
գեղեցիկ կանանց հոգեբանությունը: Իսկ

այս կողերանությունը, նրա համոզմունքով, ամեն տեղ և բոլոր ազգերի կանանց մեջ միևնույնն էր: Նա գիտեր, վոր Մելանիայի անտարբերությունն արտաքին եւ, ստիպողական, վոր մի յերիտասարդ ու զեղեցիկ կին չի կարող մի այդպիսի թառամած ամուսնու մոտ վոչինչ չըդալ զեալի մի յերիտասարդ տղամարդ, վորքան ևս բարոյակոն ու առաքինի լինի: Նա այս շատ լավ դիտեր, ուստի Մելանիայի ստունությունը չեր նրա մտատանջության պատճառը և վոչ ել այն, վոր Մելանիան նրա աղղականուհին էր: Փիրուղյանը ողատկանում էր ժամանակակից այն յերիտասարդների շարքին, վորոնց աշխարհահայացքը զերծ է աղղակցական կամ բարեկամական կազերի «նախապաշտումներից»: Սակայն Սամսոն ֆրանդուլյանը լավ մարդ ե—ահա գլխավորը: Նա շատ ե հավատում Փիրուղյանի աղնվությանը—ահա անտանելին:

Ի՞նչ անել. արհամարհել այդ մարդու հա-

վասոր, վոտնատա՞կ անել նրա պատիվը: Ո,
 վո՛չ, այս արդեն ծայրահեղ ապականություն
 կլինի, անասնություն: Ուրեմն ի՞նչ անել.
 մոռանա՞լ Մելանիային: Վո՛չ, արդեն այդ
 կինը շատ հրապուրիչ ե, արդեն նա բավա-
 կան խորը տեղ ե բռնել Փիրուզյանի սրտում:
 Մոռանալ անհնարին ե: Յեկ ինչո՞ւ մոռա-
 նալ. միթե նա հիմա՞ր ե, միթե չգիտե՞՞,
 վոր ի՞նչ վոր հաճելի յե իրեն, հաճելի յե
 և՛ Մելանիային, վոր սիրուն տիկինը ուզում
 ե զգալ ու ապրել, վոր նա, իսկապես, ա-
 տում ե իր կողակցին, թեև դուցե հար-
 դում, վոր նա շատ ել նախապաշարված կին
 չէ, վոր դարավերջի ապականությունը նրա
 հոգեկան աշխարհի վրա ունեցել ե վորոշ
 ներդործություն, վոր վերջապես, վոչ մի
 կին, նույնիսկ հայ կինը, չի կարող տղա-
 մարդի մեջ չսիրել հանդգնություն ասված
 բանը, մանավանդ յեթե տղամարդը յերե-
 տասարդ ե և վոչ այնքան ել տղեղ...
 Վճռված ե: Աշխարհի յերեսին ամեն վոք

ունի իրավունք ապրելու, իսկ մի յերիտաս-
 սարդ կին ու մի յերիտասարդ տղամարդ՝
 նամանավանդ։ Յեվ չկա որենք, վոր կա-
 րողանա խանդարել նրանց ապրելու։
 Կյանքը բարձր ե բարոյականությունից։
 Ինքը, բարոյականություն ասված միտքը ա-
 ռածդական ե, նրա կանոնները փոխվում են
 ժամանակի ընթացքում։ Այժմ իսկ այդ կա-
 նոնները տարբեր են զանազան կլիմաների
 տակ, զանազան մարդկային համայնքների ու
 կրոնական համախմբերի մեջ։ Մի բան ե մի-
 այն անփոփոխ—մարդկային սիրութ։ Անփոփոխ
 մի ձգտման մեջ—զգալ ու վառվել սեռային
 կրքով, քանի վոր ընդունակ ե վառվելու։
 Լավ ե առաքինի մարդ մնալը, բայց բնու-
 թյան ուժը անհաղթելի յե կենդանի մարդու
 համար, նաև գերադասելի բարոյականու-
 թյունից։ Հիմա՞ր մարդիկ, տեսե՞ք. դուք
 խոսում եք թոշունների մաքրության մասին,
 մի՞թե աղալինիներն այնչափ միամիտ են, ինչ-
 պես կարծում եր Քրիստոսը. Ո՞վ ե ստեղ-

ծել ընկերական կյանքի կանոնները, այդ բարոյականություն կոչված և անտեսանելի, անշոշափելի շինության հիմքու:—Մարդու կերպ: Ենք, ուրեմն մարդիկ չունի՞ն իրավունք քանդելու այն, ինչ-վոր ինքն ըստ ինքյան խորտակվում ե ժամանակի ավերիչ ուժից:

Մի ուրիշ խնդիր, վոր Փիրուղյանին զբաղեցրեց, Սամսոն Ֆրանգուլյանի լավ մարդ մնելն եր: Արդյոք, այս ճշմարի՞տ ե, արդյոք, կարելի՞ յէ այդ մարդուն լավ համարել: Ի՞նչ իրավունքով ե նա տիրացել մի յերիտասարդ կնոջ, յեթե, իրավ, լավ ե: Նա՛, այդ քայլայիված, այդ հնամաշ միլիոները: Մի՞թե լավ մարդը փողով կդներ մի անփորձ եյակէ, մի դեռահաս աղջկա, զրեթե մի յերեխայր բախտը, ճակատագիրը, կյանքը: Ո՞ո, վոչ, հազար անդամ վոչ: Բայց վոր գնել ե—թող կարողանա և պահպանել իր միլիոնները: Վոր չի կարող պահպանել, թող տուժի: Մելանիան խարված եյակ ե. այն ժամանակ,

յերբ վորոշվել ե նրա ճակատագիրը, կյանքի
մասին վոչինչ և վոչինչ դաղափար չի ունե-
ցել: Այժմ ե նրա մեջ զարթնել կյանքը, այժմ
ե սկսում յեռալ նրա արյունը: Յեվ մի՞թե
գարնան այս նորմար բացվող ծաղիկը պիտի
թողնել աշնան պաղ ձեռներում: Ինչո՞ւ. ո՞վ
ե այն բոնակալը, վոր ժամանակի վրա ան-
դամ տարածում ե իր իշխանությունը: Մի
յեսամոլ ծերումի իր միլիոններով հանդինում
ե վոտնատակ սնել բնության որենքները: Այդ
զգվելի յե...

Վճռված ե. Մելանիան բնական որենքով
այն մարդուն ե պատկանում, ով գրգռել կա-
րող ե նրա կիբը: Ով ուղում ե, թող լինի
այդ մարդը, ինքը Փիրուղյանը, թէ մի ուրի-
շը: Պետք ե այս բանը հասկացնել յերիտա-
սարդ եյակին և զգալ տալ նրան, թէ կա մի
մարդ, վոր դիտե ըմբռնել նրա դաղտնի
վիշտը:

— Դուք մերջացրի՞ք ձեր նամակը, — լովեց
Հանկարծ Մելանիայի ձայնը:

— Յես չղրեցի :

ՄԵԼԱՆԻՒԱՆ նստեց : Նստեց նաև ՓԻՐՈՒՂՋԱՆՆ
ամոմիջապես :

Ի՞նչ և նշանակում այս . ՄԵԼԱՆԻՒԱՆ անկեղծ
ուզում և աղատվել այդ մարդուց , և խոսք չի
գտնում նրան հեռացնելու : Նա կաշկանդվեց
Հյուրի մի յերկարատե նարվածքից , և գլու-
խը թեքեց կրծքին , թեթևակի կարմրելով :

Նա զգում է , վոր արյունը յերակների մեջ
սկսում է հոսել առանձին ուժով և մարմնին
սկառճառել անսովոր ու ախորժելի դողոց :
Յեվ այս է , վոր կատաղեցնում է նրան : Վոչ ,
վոչ , ովհանի այդ մարդուն ուղղակի , թեկուզ
անքաղաքավարի կերպով , ճանապարհ դնել :
ՄԵԼԱՆԻՒԱՆ ատում և նրան հոգու բոլոր ու-
ժերով , ինչպես կարող է ատել մի կին մի
մարդու : Այդ մարդու դեմքն արդեն արտա-
հայտում է վատ բան , չա՛տ վատ բան :
Բայց ինչո՞ւ ՄԵԼԱՆԻՒԱՆ հենց այս ըոպեյին
խղճում է Սամսոնին ...

— Ուղում եմ ԺԱՐԺԻԼԻԻՆ կառքով մի քիչ

կբուեցնել, յեղանակը լավ է, — փորձեց նա
հասկացնել հյուրին, թե չպիտի յերկար
նստել:

— Ժորժիկը, ձեր վորդին, ո՞ո, շատ լավ
յերեխա ե, առողջ, գեղեցիկ, և զարմանալի
նման ե հոքը, — նկատեց Փիլուլյանը, անու-
շադիր թողնելով Մելանիայի բառերի բուն
իմաստը:

ԶԵ՛, այդ մարդը միանդամայն հանդուդն է:
Սակայն նրա հանդղնության մեջ կա ինչ—վոր
քաշող ուժ: Յերբեք և վոչ վոք Մելանիայի
վերաբերմամբ այդքան անքաղաքավարի չի
յեղել, ճիշտ է, բայց և յերբեք և վոչ վոքի
ներկայությունը այսքան չի կաշկանդել նրան:
Նա անկեղծ ուղում է փախչել այդ մարդուց
և, միևնույն ժամանակ, մի անհաղթելի ուժից
մղվում է դեպի նա: Ի՞նչ տաել է այս: Մի՞թե
ատելի մարդը կարող է այսքան ձգողական
ուժ ունենալ:

— Այսոր ուղում եյի Սամսոն Պետրովիչի
հետ խոսել մի շատ լուրջ՝ կործի մասին, —

ասաց Փիրուղյանը, շարունակելով իր խոր-
հըրդավոր հայացքի տակ այրել յերիտասարդ
կնոջը:

— Բանն այն ե, վոր Սամսոնը անդործ
տիրում ե, սկսած ե վոր նա վորեւ նոր գոր-
ծի ձեռնարկի: Մի այդպիսի գործ կա, հենց
այս մասին եյի ուզում Սամսոնի անունով
նամակ գրել ու թողնել նրա սեղանի վրա:
Կառավարությունը տալիս ե մի ահազին
անտառ, շահագործելու համար: Մեծ գու-
մար ե հարկավոր, ամբողջ քաղաքում
գուցե միայն Սամսոնը կարող ե այդ կա-
պալը վերցնել: Բայց մեծ ել ոգուտ կարելի
յե ունենալ:

— Չդիտեմ, յես այդ տեսակ դործերից
վոչինչ չեմ հասկանում, — արտասանեց Մելա-
նիան, մի անդամ ես փորձելով զգալ տալ
հյուրին, թե չի ուզում յերկարացնել:

Բայց հյուրը շտապեց ոգավել հենց այդ
խոսքերից: Նա ասաց.

— Ո՞ո, շատ ուրախ եմ, վոր չեք հաս-

կանում : Այդ պատիվ երերում ձեր ճաշակին ,
կյանքը շատ տիսուր կլիներ , յեթե յերիտա-
սարդ ու գեղեցիկ կանայք ել հետաքրքրվեն
նյութականով : Ապրել ու զվարճանալ — ահա
ինչ ե վայելում ձեր հասակին , դիրքին , գե-
ղեցկությանը :

Այս խոսքերը ներդործեցին Մելանիայի
վրա : Նա մինչև անդամ փափառեց լսել
նրանց շարունակությունը : Փիրուզյանը այս
հասկացավ և շոասլեց ողտվել հարմար ըս-
պեցից : Կինը կյանքի ժպիտն ե , պոեզիան :
Կինը , մանավանդ յերիտասարդ ու գեղեցիկ
կինը , տղամարդի աստվածուհին ե : Միթե
վայել և աստվածուհուն նյութականով հե-
տաքրքրվել : Կինը մինչև անդամ չպիտի
մտածի լուրջ բաների մասին , վորովհետեւ
մտածմունքը խորչեր են առաջացնուեց դեմքի
վրա և ծերացնում են կնոջը : Կինը միայն
պիտի զգա , միայն պիտի սիրի ու սիրվի և
միշտ ձգուի լիացում տալ իր զգացմունքնե-
րին ...

Զգալ, լիսցում տալ զգացումներին։ Մելանիան վախեցալ։ Փիրուղյանը խոսում եր նրա սրտի խորքից, նրա այժմյան տրամադրությունից։ Այլ ևս նա հաղթահարվեց, գոնեայնչափ, վոր դադարեց մտածել հյուրից ազատվելու մասին։ Այժմ նա լսում եր նույնիսկ հետաքրքրությունը, թեև մերթ ցնցվելով, մերթ անտարբեր ձեանալով, մերթ բարկանալով միմյանց հակասող, միմյանց ջնջող զգացումներից։

— Յես շատ ռւրախ եմ, — շարունակեց Փիրուղյանը յեռանդով, — վոր դուք զբաղվում եք հասարակական գործերով։ Բայց, ներեցեք, ինձ թվում ե, դուք այդ անում եք, ը' ը' ը', անում եք... ձեզ խարելու համար...

— Ուրեմն դուք չե՞ք հավատում իմ անկեղծությանը, — դոչեց Մելանիան վիրավորված։

— Վո՞չ, — արտասանեց Փիրուղյանը համարձակ, մեղմիկ ժաղիտով, և նայեց խոսակցի բիրերին։

— Ի՞նչ իրավունքով։

— Իրավունքի բան չկա, ճաշակի խնդիր ե:
 Նախ և առաջ՝ պիտի ասել, վոր յեռ չեմ հա-
 վատում առհասարակ կանանց, մանավանդ
 յերիտասարդ կանանց հասարակական գործու-
 նեյությանը: Յես այստեղ ճանաչում եմ մի
 քանիսին, վորոնք իրենց յերեխաներին հանձ-
 նում են ծառաների հսկողությանը, իսկ ի-
 րանք որը մինչև յերեկո վազվզում են դես
 ու դեն մի ինչ-վոր ճանձրալի պարահանգես-
 կամ ավելի ճանձրալի ներկայացում սարքե-
 լու համար: Նրանք յերեակայում են,
 թե իրենք կազմում են հասարակա-
 կան կյանքի առանցքը: Ո՞ո, անկա-
 րելի յե նրանց հետ վիճարանել: Խո-
 սում են հեղինակավոր յեղանակով, քննադա-
 տում են այսպիսի բաներ, վորոնց մասին
 համի հասկացողություն ունին: Այդ կանայք
 յերջանկիկ են իրենց իլլուզիայով և դժբախտ՝
 կյանքի տեսակետից նայողի աչքում: Նրանք
 ավելի հաճելի կլինելին, յեթե սովորելին ճա-
 շակով հագնվել ու ճաշակով սամնել իրենց

մազերը։ Դալով ձեզ, դուք, տիկին, գործել
չեք ուղում, այլ ի՞նչովես ասեմ... զդալ ու
ապրել... Դուք աշխատում եք միայն գործով
թմրեցնել ձեր սրտում նոր վառված շատ
բնական ու շատ ներելի զգացումները։ Հաւ-
կանում եք, կարծիք։ Եհ, չի կարելի չափել,
վոր մի քիչ ել սնափառ եք, ինչովես առնա-
սարակ բոլոր հարուստ կամ վորեն դիրք ու-
նեցող կանայք։ Վոչ, դուք դործել չեք ու-
ղում, այլ ապրել, կրկնում եմ, ապրել։ Ին-
չո՞ւ—նրա համար, վոր դուք այժմ, ներկա
հանդամանքներում... չեք ապրում...

Հանդուգին մարդ։ Իր դիտողական ձիր-
քով, իր արծվային հայացքով նա թափան-
ցում եր յերիտառարդ կնոջ սրտի խորքը և
քրքրում զգուշությամբ թալցրած զգաց-
ցումները։

— Դուք սխալվում եք, յես ապրում եմ և
շատ լավ եմ ապրում,—ասոց Մելանիան այն-
պես արագ, վոր կարծես, վախենում եր՝
մի դուցե ուրիշ ըան ասի։

Մի թեթև հեղնական ժպիտ սահեց Փիրու-
ղյանի դեմքով :

Տիրեց վայրկենական լոռւթյուն :

— Քանի՞ տարեկան եյիք, յերբ ձեզ ա-
մուսնացըին, — հարցրեց նա անփույթ յեղա-
նակով, սակայն վորոշ չեշտելով «ձեզ ա-
մուսնացըին» բառերը :

Հարցը, հարկավ, համարձակ եր, բայց չե՞
վոր Փիրուղյանը ազգական ե, ունի իրավունք
թույլ տալու իրան վորոշ ազատություն :

— Զգիտեմ, չեմ հիշում, — պատասխանեց
Մելանիան Հուզմունքից դողացող ձայնով :

—Յերեխ, տասնույթեց կամ, չա՞տ—չա՞տ՝
տասնույթ տարեկան, — լրացրեց ինքը Փի-
րուղյանը, — այսինքն այն հասակում, յերբ
ձեր վերջին խաղատիկնը դեռ փշրված չեր :

Յեվ, մի վայրկյան կանդ առնելով, ցածր
ձայնով ու, կարծես, ինքն իր հաժար, ավե-
լացրեց .

— Այո, այո, տղամարդիկ յեսամոլ են,
վոճագործության չափ յեսամոլ :

Պարզ եր, թէ ում եյին վերաբերսլում այս
բառերը :

Եյտկանը ասված եր. ավելի հեռու գնալն
առաջմ և՛ անհարմար համարեց, և՛ վտանգա-
վոր : Նա վոտքի յելավ—ժամացույցին նայե-
լով : Ժամանակ ե ժորժիկին դրոսնելու տա-
նել :

— Հուսով եմ, վոր սսածներս կատակի
տեղ կընդունեք և կմոռանաք :

Յերբեք նա այնքա՞ն յերիտասարդ, այն-
քա՞ն ուժեղ, այնքան դրզուցուցիչ չեր
թվացել Մելանիային, վորքան այսոր, հետե-
վարար՝ այնքան ատելի և յերկյուղալի:

Յերեկոյան, յերբ Մելանիան Սամսոնին
հայտնեց Փիրուղյանի այցելության մասին,
ավելացրեց .

— Վերցրո՞ւ այդ կապալը, դու անդորձ
տիսրում ես :

VIII

Մելանիան չեր կարողանում մոռանալ Փի-
րուզյանի խոսքերը։ Մտածում եր, քննում,
վերլուծում և ակամա յեղբակացնում, թե
վորքան հանդուգն են այդ խոսքերը, նույն-
քան ճիշտ են։ Ճիշտ գոնե այն մասում՝ թե
յերիտասարդ կինը պիտի զգա ու ապրի, վոր
ինքը Մելանիան, պարապելով հասարակական
գործերով, չի զգում այն, ինչ-վոր պահան-
ջում և սիրու, թե կյանքն անցողիկ ե, իսկ
մարդ յերկրորդ անդամ շի ծնվում, թե վեր-
ջապես, «վորքա՞ն տղամարդիկ յեսամոլ են»։

Գտնվել ե մի անձ, վորը հանդդնարար կար-
դում և նրա մտքերը և շոշափում նվիրական
զգացումները։ Նո ինքն յերիտասարդ ե, նրա
ամբողջ կաղմից մարմնավոր ուժն ե բուրում,
այն, ինչ վոր վազուց և թառամել Սամսոնի
մեջ։ Լավ մարդ ե թե վատ, խելոք ե թե
հիմար, բարոյական թե անբարոյական,—
այդ չե խնդիրը։ Յերիտասարդ ե—աշա գըլ-

իսավորը։ Յեվ ունի իրավունք ասելու, թե
Մելանիան չի ապրում ու չի կարող ապրել Ա
կյանքով մի ծերունու հետ։

Ամեն որ Փիրուղյանը դալիս եր իր աղա-
գականի մոտ դործի վերաբերմամբ խոսելու։
Սամսոնը վաղուց եր դադարել մտածել դրա-
ժական շահերի մասին։ Յեվ այս վոչ այն
պատճառով, վոր փողից կուշտ եր, այլ այն,
վոր այժմ այլևս կյանքի քաղցրությունը
դրամի մէջ չեր տեսնում, վորսես առաջ։
Նա սնդործ տիսրում եր, — ահա ինչու համող-
վեց կազալը վերցնել։ Իրավունք ովեց Փի-
րուղյանին մանրամասն տեղեկանալ պայման-
ների մասին և ժամանակին հիշեցնել աճուր-
դի որը։

Վորքան Մելանիան անկեղծ վախագում եր
առաջլաւ պես վախչել Փիրուղյանից, այնքան
ավելի այժմ ներքին ուժը մղում եր նրան դե-
պի յերիտասարդ տղամարդը։ Նա զգում եր,
վոր վաղ թե ուշ այս ակամա հակումը կա-
րող ե Սամսոնի աչքին ընկել ել։ Վախենո՞ւմ

եր ամուսնուց : — Վոչ , վախինում եր իր խղճից , չեր ուղում նրա դեմ վորեւե հանցանք գործել : Զգում եր , վոր իր դրությունը վտանգավոր ե , վոր կարող է կուրանալ , մուլուվել ու ընկնել առաջին պատահողի դիրկը , թեկուզ այդ առաջին պատահողը լինի անցորդի մեկը . ատելով Փիրուղյանին , յերկնչում եր նրա մերձավորությունից , ինչպես մի թունալի ու սոսկալի ախտից : Ախտ , վոր թեև հաճելի ու արբեցուցիչ , բայց կործանիչ ե :

Յել նա կովում եր ինքն իր հետ : Յերբեմն զգում եր , վոր մտքի ուժը ահա , ահա սլետի հաղթվի կրքերի զորությունից : Այսպիսի բոպեներին նա կարոտում եր Սամսոնի ոգնությանը : Թող այդ մարդը նրա Հետ վարվի խիստ , անողոք . այս և միայն այս կարող և Մելանիային փրկել , որահպանել նրան հնարավոր անկումից : Յերբեմն նա վափագում եր , վոր Սամսոնը խանդե , թեկուզ անտեղի

զայրանա, կատաղի և կշտամբե նըան ամենավիրավորական խոսքերով:

Մինչդեռ Սամսոնը վոչ միայն չեր խանութում, այլ և վերին աստիճանի համբերող եր: Գոնե այսպես եր, յերեսում արտաքուստ:

— Այսոր միասին գնանք ոպերա, —ասում եր Մելանիան, վոր սովորաբար մենակ եր գնում թատրոն:

— Լա՛վ, գնանք, —պատասխանում եր Սամսոնը, թեև ատելով ասում եր ոպերան:

— Այսոր սպասավորին հրամայել եմ այսուհետեւ ցիլինդրով ու սյուրթուկով նստել կառապանի մոտ: Զերքեղկան ու դաշույնը զահես տարել են:

— Լավ ես արել, —պատասխանում եր Սամսոնը, թեև ամեն մի ցիլինդրի թշնամի յեր, մանավանդ սպասավորների ցիլինդրին:

— Եդուց խոհարարին ուղում եմ արձակել, չեմ հավանում:

— Արձակի՞ր, —պատասխանում եր Սամսոնը, թեև խոհարարը շատ լւավ եր պատրաս-

տում նրա սիրած կովկասյան կերակուր-
ները:

Այս անսահման հլությունը, վերջապես,
սկսեց ձանձրացնել Մելանիային: Ի՞նչ է նշա-
նակում այս: Ինչո՞ւ Սամսոնը այդպես խեղ-
ճացել է, կամքից զրկվել և ներկայացնում ե
իր դասակարդի մարդկանց կատարյալ հա-
կապատկերը: Անկարելի յե, վոր այդ հեղու-
թյունը մի հետին միտք չունենա, մի ավելի
խոշոր ողատճառ, քան սերը դեպի Մելա-
նիան:

Մի որ Մելանիան փորձի համար ասաց,
թե վճռել ե անգլերեն լեզվի դասեր վերց-
նել: Կա մի պոլսեցի յերիտասարդ ուսուցիչ:
Վորին ուզում ե վարձել վորպես ուսուցիչ:
— Եհ, փորձի՛ր յեթե ուզում ես,—համա-
ձայնվեց Սամսոնը:

— Ուրեմն թո՞ւյլ ես տալիս: Իսկ Խուղա-
նովն իր կնոջը չի թույլ տալիս:

— Խուղանովն ինձ համար որինակ չե: Լե-
զունեթ սովորելը լավ բան է: Ասում են՝ մի

լեզու իմացողը մեկ մարդ է, հինգ լեզու իմացողը—հինգ մարդ :

Մելանիան մի անհամբեր չարժուամն արավ և լռեց :

Գնալով՝ Սամսոնի հլությունը ոկտեց նրա համար դառնալ արդեն վոչ միայն ձանձրալի, այլ և... զզվելի, այլևս այդ հլության մեջ նա տեսնում եր թուլություն, բարոյական ուժերի բացակայություն։ Մի բան, վոր առհասարակ ատում եր ամեն մի աղամարդի մեջ :

Մի որ առավոտք, թեյից հետո, Մելանիան ասաց .

— Սամսոն, այս յերեկո ուզում եմ դիմակահանդես գնալ, թույլ կտա՞ս :

— Գնա՛ :

Մելանիան դիտեր, վոր Սամսոնը ամբողջ հոգով հակառակ է դիմակահանդես դնալուն, և այս անդամ կատաղեց կեղծիքի դեմ :

— Դու դարմանալի մարդ ես,—դոչեց նա ներվային թափավ :

— Ինչո՞ւ :

Մելանիան մտածեց և հանկարծ արտասահեց .

— Չեմ սիրում այդ տեսակ աղատություն : Հասկանո՞ւմ ես, չեմ սիրում, զգվում եմ ...

Սամսոնը նայեց նրա յերեսին դարմացած : Կար ժամանակ, յերբ Մելանիան սաստիկ ձգտում էր հենց այդ տեսակ աղատություն ունենալ, իսկ այժմ ի՞նչ պատահեց :

— Մեղա՛, թե միտքդ հասկանամ .—արտասահեց նա, ուսերը վեր քաշելով :

— Չե՞ս հասկանում ,—զոչեց Մելանիան նույն ջղային յեղանակով ,—ավելի վատ քեզ համար : Ուղո՞ւմ ես, վոր պարզ խռում : Դու իսեղճ մարդ ես, իսկ յես իսեղճ մարդկանց չեմ սիրում :

— Յե՞ս եմ իսեղճ մարդ ,—կրկնեց Սամսոնը, սառն հեղնությամբ ժպտալով ,—յերեկ զու ինձ դեռ լավ չես ճանաչում :

— Վո՞չ, այդ չեյի ուզում ասել : Դու իսեղճ չես, այլ չափից դուքս շատ ես սիրում ինձ :

— Տեր առենակարող աստված,—կարողացալ միայն մըմնջալ Սամսոնը:

— Մի՛ սիրիք ինձ, այո՛, մի՛ սիրիք...

— Ասա՛, ասա՛, տեսնենք՝ ե՛ւ ինչ ես ասում:

Հանկարծ Մելանիայի կոկորդի յերակները փքվեցին, կասպտեցին, յերեսի մկանունքները աղավաղվեցին, կուրծքը բարձրացավ ուժուն: Սկսեց հեկեկալ: Սամսոնն արդեն ապցեց: Բանի մի վայրկյան լուռ նայեց կնոջը, ապա մոտեցավ և ձեռքը դրեց նրա ուսին:

— Մելանիա, արդյոք հիվանդ չես դու:

Մելանիան մի բոպե թույլ տվեց բուռն արտասուրին դուքս հոսալու, ապա մի քիչ զսպեց իրեն, վոտքի կանդնեց:

— Ա՛խ,—ասաց նա, արցունքները արագալ սրբելով,—յես ինքս եւ չեմ հասկանում՝ ինչ եմ աւում: Դու սիրում ես ինձ, վո՞չ միայն ինձ, այլև ծնողներիս, քույրերիս ու յեղբայրներիս: Բայց ինձ թվում ե, վոր դու այդպես չպիտի լինես, ընդհանրակը, սլիտի

իմ դլխին բռնակալ դարնաս : Այո՛ , այնպես ,
ինչպես հին ժամանակի սմուսինները : Ուղում
եմ , վոր դու ինձ վրա դոռաս , չթույլ տաս
ինձ տնից դուքս դալ , թողնես մենակ , ինքու
գնաս կլուքներում , հյուրանոցներում ու այ-
դիներում քիֆ անես : Ուզում եմ՝ հարբած
տում դաս , ինձ հայհոյես , ծեծես , հասկա-
նո՞ւմ ես , ծեծես վոտներիդ տակը զցելով :
Կարո՞ղ ես այլպես անել , ասա՛ , կարո՞ղ ես :

Սամսոնն արձանացել եր տեղն ու տեղը :
Նա չեր հավատում իր ականջներին :

—ՅԵթե չես կարող հարբել , հայհոյել , ծե-
ծել , դոնե հետս վարվիր այնպես , ինչպես ի-
րենց կանանց հետ վարվում են այժմյան ա-
ժուսինները :

— Այսի՞նքն :

— Խարի՛ր ինձ , դավաճանի՛ր , աչքիս առ-
ջև սիրուհինե՛ր պահիր . մի խոսքով՝ վատ ա-
մուսին յեղիր , շատ վատ , շա՛տ կոպիտ , ան-
պիտա՞ն , կեղտո՛տ , դաղա՛ն : Այնքան կեղ-
տոտ , այնքան դազան , վոր ամբողջ քաղաքը

խոսի քո մասին, վոր ամենը քեզ ատեն ու
հայհոյն: Քեզ ատեն ու հայհոյն, խել իմ
մասին ցալեն, ասեն. «Խեղճ կին, անբաշխտ
կին, ինչպես տանջվուած եւ մարդու ձեռքին»:

Մի ինչ-վոր սուր միտք անցավ Սամսոնի
ուղեղով: Բայց աշխատեց խկույն և թ ա-
ղատվել այդ մտքից: Ծանր եր նա, դաժան,
գարշելի: Նա ձեռքով մի բացասական շար-
ժումն արավ, մոտեցավ Մելանիային, յերկու
մատով բարձրացրեց ծնոտը, նայեց ուղիղ
աչքերի միջին և արտասանեց.

— Մելանիա, հասկանում ես՝ ինչ ես ու-
ղուած ինձանից:

Յեվ, անցնելով սենյակի մյուս ծայրը,
յետ յեկավ ու ավելացրեց.

— Զգո՞ւշ, Մելանիա, յեթե ուղենամ վատ
մարդ լինել, չո՞տ վատ կլինեմ. խմացի՛ր,
չո՞տ վատ:

Այս ասվեց հասարակ յեղանակով, բայց
այնպիսի համոզիչ ուժով, վոր Մելանիան մի
վայրկյան սարսափեց: Նայեց ամուսնու յե-

բեսին և զգաց, վոր, արդարեւ, յեթե Սամսոնը
կամվնա, կարող ե շատ վատ ամուսին դառ-
նալ: Նրա խորչոմած մոռայլ ճակատը այդ
պահին սքողիլած եր տարորինակ ստվերով:
Կիսաթառամ աչքերի մեջ յերեսում եր տան-
ջող խանդի կուրությունը, վոր կարող ե ան-
դամ հանցանք դորձել:

Բայց այնուամենայնիվ Մելանիան չզըղ-
ջաց: Նա ասաց.

— Ինչ ուզում ես, արա՛, միայն փոխվիր:
Կամ հին մարդ յեղիր, կամ նոր մարդ, կամ
բոնակալ կամ դավաճանող:

Ասաց, կարծես, հակառակ իր կամքի.
միայն յենթարկվելով ինչ-վոր տարերային
ուժի ազդեցության . . .

IX

Այսպես, ուրեմն, Սամսոնը չառ է սիրում
Մելանիային: Իսկ Մելանիան, ընդհակառակը,
ուղում է ատվել նրանից: «Ուզում եմ, վոր
հարրած տուն գաս, հայհոյես ինձ, ծեծես»:

ՅԵթե Սամսոնը այդ չի կարող անել, թող
վարվի նրա հետ այժմյան ամուսինների պես:
«Մարիր ինձ, դավաճանիր, աչքիս առջև սի-
րուհիներ պահիր»:

ՅԵթե Սամսոնը մինչև այժմ կտնկածում
էր, այսոր համոզվեց, վոր ինքն արդեն ա-
տելի յե դարձել Մելանիայի համար: Ահա
ինչու Մելանիան սպահանջում է, վոր Սամ-
սոնն ատի նրան. նա փոխադարձություն և
սպահանջում:

«Կամ հին մարդ յեղիր կամ նոր մարդ,
կամ բռնակալ կամ դավաճանող», — հնչում էր
Սամսոնի ականջին Մելանիայի վերջին խոս-
քերը: Վո՞րը լինել, բռնակա՞լ, թե՞ դավա-
ճանող: Դավաճանել Մելանիային: Ո, վո՛չ.
այս չի կարող անել Սամսոնը: Նրա հայց-
քով տղամարդուն ներելի յե անել ամեն ինչ,
քանի վոր ամուրի յե, իսկ յերբ մի անդամ
մարդ ամուսնացավ, պիտի հավատարիմ մնա
ամուսնական առաջաստին: Վոչ, Սամսոնը
դավաճանել իի ուղում, նա մինչև անդամ

զգվում եւ այս մտքից : Յեկ վերջապես , ինչ-
պէս դավաճանել :

«Ի՞նչպես» , կը ինում եր Սամսոնը դառն
կսկիծով : Այս բառի մեջ նա զգում եր մի
թունալի հեղնություն , մի սոսկալի ծաղր :
Դավաճանել . այո՛ , Սամսոնի համար հասկա-
նալի յեւ , թե ի՞նչ եր ուզում ասել Մելանխոն
այս բառով ...

Նա շրթունքները անխնա կրծոտում եր մի
ծանր , անտամնելի մտքից , մի ցամի գիտակ-
ցությունից , վորի համար գեղ չկարուհ , ա-
նիրավ որենքներ բնության , միթե չկա վոչ
մի փրկարար միջոց ձեր քայլայիչ գորու-
թյան դեմ : Զկա , նա բոլոր միջոցները փոր-
ձել եւ արդեն և հիասթափովել ...

Ուրեմն բոնակա՞լ դառնալ : Փակե՞լ Մելա-
նիային տանը , դոռա՞լ , հայհոյե՞լ , ծեծե՞լ :
Յեկ ինչո՞ւ չեւ : Յեթե մինչեւ այժմ Սամսոնը
կատարյալ աղատություն եւ տվել կնոջը՝ առ-
բել ուզածին պես , արել և հակառակ իր հա-
յացքների , միայն այն պատճառավ , վոր սի-

ըել ե նրան ; չի կամ եցել , կամ ավելի ճիշտը ;
չի կարողացել վշտացնել այդ յերեխային :
Այժմ Մելանիան ինքն ե ասում , թե ձանձրա-
ցել ե այդ աղատությունից :

Հարգանքի զգացումը ավելի յե ճնշում
նրան , քան ատելության ուժը : Սամսոնի «Հայկ
մարդ» լինելը տանջում ե նրան : Ո՞հ , այժմ
միայն Սամսոնը հասկանում ե այս բանը :
Լավ մարդու դեմ մեղք գործելը այնքան հեշտ
չե , վորքան «բռնակալի կամ դավաճանողի»
դեմ : Խիղճը թուշ չի առվա : Թող Սամսոնը
վատ մարդ դառնա . մանավանդ վատ հռչակ-
վի հասարակության մեջ , այն ժամանակ Մե-
լանիան իրան աղատ կհամարի և ... իսկ
այժմ կաշկանդված ե ...

Այս մտքերի ազդեցությամբ Սամսոնն
զգում եր այնպիսի կսկիծ , վորի նմանը յեր-
րեք չեր զգացել : Յեղել եր աղքատ , անպաշտ-
պան , կրել եր մարդկային արհամարհանքնե-
րի ծանրությունը : Դառնալով վաճառական ,
յերկու անգամ մոտիկից տեսել եր առետրա-

կան աշխարհի համար այն սոսկալի վիշտի
աչքերը, վոր կոչվում է սնանկություն։ Լսել
եր պարտաստերերի ծաղրն ու հայնուանքները։
Իբրև սիրող վորդի, քսուասունութ ժամ դի-
տել եր մահամերձ մոք տանջանքները։ Իբրև
սիրող հայր, կրել եր առաջին զավակի մահ-
վան հարվածը։ Նա տեսել եր և ուրիշ շատ
թշվառություններ, բայց յերբեք այնպես չեր
առնջվել, վորպես այժմ, յերբեք՝ ք։

Նա յերեակայում եր իրեն բռնակալ ամուս-
նու դերի մեջ և ինքն ել սոսկում եր բոլորից,
ինչ վոր կարող եր և ընդունակ եր անելու
այդ դիրքում։ Մինչեւ այժմ նա խանդել եր,
այո՛, բայց խանդել եր միայն Մելանիայի
յերիտասարդությանը։ Իսկ այժմ հանկարծ
առաջ ե զալիս մի զարշելի, մի դժոխային
կտսկած—արդյոք, Մելանիան չի զավա-
ճանել։

Յեվ յեթե դավաճանել ե, ո՞վ ե նրան մո-
լորեցնողը։ Վերջին ժամանակ նա այնքան հե-
ռու յե պահում իրեն տղամարդկանց ընկերու-
թելանիա 6

թյունից, վոր դժվար է կտոկածել վորեն
մեկի մասին :

Փիրուղյա՞նը—անցավ հանկարծ՝ Սամսոնի
մտքով : Ինչո՞ւ չե . մի՞թե նա յերիտասարդ
չե : Բայց վոչ, այդ անկարելի յե , ի՞նչ ան-
պիտան, ի՞նչ հանցավոր միտք : Փիրուղյանը
հարդում է Սամսոնին այնքան, վերաբերվում
է Մելանիային այնպիսի ողատկառանքով ,
Մելանիան ուսո՞ն է դետի նա այնչափ, վոր ա-
մոթ է անգամ կտոկածել նրանց հորարերու-
թյունը :

Սակայն, վորքան Սամսոնը տշխառում եք
դուրս հանել մոքից այդ մարդուն, այնքան
նրա յերիտասարդ ու թարմ կերպարանքը
ողառնում էք նրան . . .

Այսպես տեսեց մի ամբողջ շաբաթ : Բանը
հասավ այնտեղ, վոր Սամսոնը ցանկացավ
կրծատել Փիրուղյանի այցերը : Այս նպատա-
կով նա դրականապես հրաժարվեց անոտառի
կազալից հենց աճուրդի որք : Փիրուղյանը
չհասկացավ նրա իսկական միտքը, միայն

մուտք կերպով զգաց, վոր Սամսոնի մեջ վերա-
ջին որերը կատարվում և ինչ—վոր վոփոխու-
թյուն։ Նա զգուշացավ և մի քիչ կրճատեց
իր այցելը։

Այժմ Սամսոնը կասկածով եր վերաբերվում
Մելանիային, հետեւում եր նրա յուրաքան-
չյուր քայլին։ Նա տակավին չեր վարվում իր-
րե բռնակալ, բայց արդեն մոտ եր այդ աս-
ախճանին։ Յեվ մերձենում եր առանց ինքնա-
րեր վորոշման, այլ այնպես, անգիտակցա-
բար։ Նա կարծում եր, վոր Մելանիան զղջում
և իր արածների մասին և շուտով կսկսի բա-
զոքել մարդու մի քանի թեթև խստություն-
ների դեմ։ Բայց պատահեց հակառակը։ Մի
որ Սամսոնը Մելանիային արգելեց ինչ-վոր
պարերեկույթ դնալու հենց այս պահին,
յերբ տիկինն արդեն հաղնված եր և դրսում
սպասում եր լծված կարեթը։ Մելանիան իս-
կույն ուսերից դեն ձգեց մուշտակը ասելով։

— Շատ լավ, յեթե չես թողնում՝ չեմ
դնալ։

Սամսոնը զղջաց . նա փորձում էր միայն իր
ուժը :

— Գնա՛ , քանի վոր պատրաստվել ես , — ա-
սաց նա :

Բայց Մելանիան սկսեց նրա առջև մեկ մեկ
դեն ձգել իր արդուզարդը :

— Գնա՛ , ասում եմ , — կրկնեց Սամսոնը :

— Վոր արդելում ես , ի՞նչպես դնամ :

— Զեմ արդելում :

— Վո՞չ , արդելում ես :

Սամսոնը բարկացավ , ձայնը բարձրաց-
րեց :

— Ասում եմ քեզ , վոր թույլ եմ առլիս :

— Թույլ ես առլիս , բայց ինքո գոռոմ
ես : Ունես իրավունք , զոռա՛ :

— Մելանիա , — զոչեց Սամսոնը , ձայնը
ավելի բարձրացնելով . — մի՛ հանվիր :

— Արդեն հանվել պրծել եմ : Մաղերս ել
բաց արի : Ի՞չը , կատաղում ես , աչքերդ
կարմրում են , բռունցքներդ սեղմում ես :

Զեմնի՞ թե ուղում ես ծեծել, հաս՞ . ծեծի՛ր, ունիս իրավունք:

Այն ինչ՝ Սամսոնը վոչ կատաղած եր, վոչ աչքերը կարմբել եյին, վոչ մանավանդ բռունցքները սեղմել: Նա միայն բարկացած եր:

— Ծեծել, — կրկնեց նա, — ժամանակ-ժամանակ այնպիսի բաներ ես ասում, վոր ձեռներու քոր են դալիս:

— Ավելի լավ, ավելի լավ: Յես դիմ չեմ, ծեծի՛ր, ծեծի՛ր, ինչքան քեփդ է: Յես մի խեղճ անպաշտպան կնիկ եմ, ծեծի՛ր ...

Յեվ նա սկսեց հեկեկալ, ընկնելով թախտի վրա: Սամսոնը ակամա մեղմացավ. ավելի. նա պատրաստ եր մոտենալ, դրկել ու համ- բուրել Մելանիային, մինչև անդամ ներումն ինդրել: Բայց զսպեց իրեն. թող չկարծի այդ կինը, թե իր ամուսինը շատ ել թուլամորթ է: Նա սսաց.

—Դու խելազարվել ես:

— Խելազարվել եմ, այօ՛, —հաստատեց

Մելանիան, —իմ տեղը ո՞վ չի է ինելագարվիլ:
Ուրեմն, փակիր ինձ տանը, մի՛ թողնիր
գուրս գամ, կարող եմ գժություններ անել,
հասկանո՞ւմ ես, կարող եմ գժություններ
անել . . .

Այսպիսի ահօարաններ կրկնվեցին մի քանի
անդամ: Յեզ ամեն անգամ Մելանիան, կար-
ծես, աշխատում եր Սամսոնին արամադրել
այսպես, վոր մարդը կորցնի համբերությու-
նը, կատաղի և վերջապես, բռունցք բարձ-
րացնի նրա գլխին: Իսկ Ամմանը դեռ կարո-
ղանում եր իրեն զաղել: Նա ուրիշ բան եր
ժոածում . . .

X

Այն որից, յերբ Սամսոնի սրոում կասկած
ծագեց, կամենում եր Մելանիայի հետ խո-
սել Փիրուղյանի վերաբերմամբ: Նա ուզում
եր իմանալ կնոջ կարծիքը այդ մարդու մա-
սին և զուցե հենց սեփական խոսքերով բռնել
նի ան:

Մի որ նա հարցըեց .

— Մելա՛նիա , ինչո՞ւ Արտյուրն Ել առաջ-
վա պես շուտ-շուտ չի գալիս մեր տուն :

— Յես ի՞նչ դիտեմ , հարցրու իրանից :

— Իսկ յես դիտեմ : Նա քեղանից վերա-
վորվել ե :

— Ինչո՞ւ :

— Լավ չես քննունում նրան , — պատաս-
խանեց Սամսոնը և յերկիմաստ հայացքով
հայեց կնոջ յերեսին :

— Յե՞ս , թե՞ դու , — արտասանեց Մելա-
նիան , չչփոթվելով ամուսնու համառ հա-
յացքից :

— Այո , ճշմարիտ ես ասում . յես Ել լավ
չեմ քննունում նրան : Ուզո՞ւմ ես միտքս ի-
մանալ . այո , շատ ուրախ եմ , վոր նա հի-
մա քիչ-քիչ ե յերեսում իմ տանը :

— Պատճառը :

— Հենց այսպես : Մինչև անդամ լավ կը-
մինի , վոր իսկի Ել չդա այսուհետե :

— Դու այդ ուզո՞ւմ ես :

— Իսկ դու չե՞ս ուղում :

— Ինձ թո'զ, աստված սիրես : Ազգականը քոնն է, դո՞ւ տառ, ուղո՞ւմ ես, վոր նա իսկի չգա մեր տուն :

— Ուղում եմ, — պատասխանեց Սամսոնը հանկարծ, փորձի համար :

— Լավ, — ասաց Մելանիան և լոեց :

Հետեւյալ որը Փիրուղյանն յեկավ : Սամսոնը տանը չեմ : Մելանիան հրամայեց սպասավորին՝ հայտնել, թե պարոնը և տիկիւնը առանը չեն : Մինչդեռ սպասավորը նախասենյակում հաղորդում էր այս խոսքերը Փիրուղյանին, նա անմիջապես գոչեց .

«Ժորժիկ, ժորժիկ, ազա թե կարող ես ինձ բռնիր» : Յեվ սկսեց վաղվղել, բարձրութայն ծիծաղել :

Մի ժամ անցած՝ նա իր արարքը պատմեց Սամսոնին :

— Աւետմն Արտյուքն իմացավ, վոր դու տա՞նին ես — հարցրեց Սամսոնը զայրանալուկ :

— Ոյ, տանը ե առողջ :

Աամոռնի աչքերը կատաղությունից փայլեցին :

— Մելա՛նիա , դու քանի գնում , խելքէ կորցնում ես , — դոչեց նա , — ինչո՞ւ համար ես ինձ խայտառակում իմ ազգականի մոտ :

— Ինքո ուղեցիր , վոր նա մեր տունը վոս չընի :

— Ցես . . . կատակ Ելի անում :

— Կատակ՝ , հա՞ա , դու . . . կատակ՝ , — հեղնաբար ծիծաղեց Մելանիան , — մի՞թե դու կատակ անել ել գիտես , չեյլ իմանում , ներողություն :

— Ցես քեզ փորձելու համար ասացի , թե չեմ ուղում Աթոյուրին մեր տանը տեսնել :

— Ինձ փորձելու համա՞ր :

— Մելա՛նիա :

— Ինձ փորձելու համար , — կրկնեց Մելանիան , ինքն իրեն կորցնելով , — ա՞ա , ուրեմն , ուրեմն . . . դու ինձ կասկածո՞ւմ ես :

— Այո՛ , կասկածում եմ . . . չի՞ կարելի քեզ կասկածել , ինչ ե :

Մելանիայի աչքերը պսպղացին։ Նա կամեցավ հեկեկալ, բայց ճիգ արտավ և իրեն զսպեց։ Նա միայն ասաց։

— Այդ եր պակաս... կասկածել ինձ...
— Ինչո՞ւ, դու կին չե՞ս, ինչպես բոլոր կանայք։

— Յես մի անբախտ եմ, ուրիշ վոչինչ, — արտապահեց Մելանիան շնչառալառ։

— Անբա՛խտ, — կը կնեց Սամսոնը դառն հեղնանքով, — յեթե դու անբախտ ես, կկամենայի իմանալ՝ ո՞վ ե բախտավոր քո ծանոթներից։ Որը մի տեսակ կերակուր ուտո՞վը, թե տարին մի ձեռք հագուստ չունեցողը։ Ո՞ւմ ե նախանձում ամբողջ քաղաքը. քե՞զ, թե՞ մի ուրիշին։

— Սամսոն, միամիտ մի՛ ձեսնալ։ Դու շատ լավ դիտես, թե բախտավորությունը լավ ուտելիսելու ու չքեղ հագուստների մեջ չե։

— Կկամենայի դիտենալ՝ այն ի՞նչ ե, վոր

մեր դարոււ՞ չի կարելի ունենալ դրամի
զորությամբ :

— Ի՞նչ ե, — կրկնեց Մելանիան սրտի
կոկիծով, — ի՞նչ ե...

Յեվ մի սուր հայացքով ուղիղ նայեց տ-
մունքու աչքերին; Սամսոնը հասկացավ նրա
թունալի, բայց արդարացի միտքը: Հասկա-
ցավ և շրթունքները կրծոտելով, լոեց:

— Լոռում ես, — մրմնջաց Մելանիան և
նույն վայրկյանին մի յերկարագու հարվա-
ծող ծիծաղ դուրս թռալ նրա կրծքից:

— Մելանիա, — գոչեց Սամսոնը խոպոտ
ձայնով, — դու չափ ու սահմանով կորցնում
ես: Մելանիա, մարդ չպիտի մոռանա իր
անցյալը :

Այս արդեն Մելանիայի կծու ակնարկի
պատասխանը չեր, այլ մի սեսակ վախուսա-
բուն խնդրից...

— Ի՞նչ ես ուզում ասել զբանով, պարզ
խոսիք...

— Ժամանակ ե հասկանալու, վոր քեզ

նման յերիստսարդ ու գեղեցիկ կանայք հա-
զարավոր են, իսկ քեզ պես ապրում ե հա-
զարեց մեկը... Հասկանո՞ւմ ես, ինչ եմ
ասում...

Հասկանո՞ւմ ե, արդյոք, Մելանխոն: Ի՞նչ-
պես չհասկանալ, յերբ մարդ խոսում է
այնքան պարզ, յերբ նրա յուրաքանչյուր
բառի, ձայնի ամեն մի հնչյունի մեջ զգաց-
վում է միլիոնատիրոջ թունալի արհամար-
հանքը գեղի մի կնոջ չքաղվոր անցյալը: Մե-
լանխոն դիմաթափ յեղալ, գլուխը թեքվեց
կրծքին, ձեռները թուլացան: Այսպես, ու-
րեմն, հարվածի փոխարեն հարված, և ա-
վելի զորեղ: Յեթե նա Սամսոնից յերիտա-
սարդություն է պահոնջում, Սամսոնն ել
պահանջում է նրանից հյշել անցյալը: Նրան
վողորմություն են արել, դուրս ըերելով չքա-
վորությունից և հարուստ ու չքեզ ապարանք
ներմուծելով: Նա յերախոսամոռ և և իր վե-
ճակի համար փոխանակ չնորհակալ լինելու՝
հանդիմանում ե բարերարին:

Մի քանի վայրկյան Մելանիայի մտքերը
շփոթվեցին։ Սակայն մի բան նրա համար
ոլարդ եր ավելի, քան յերբ և եւ այն, վոր
վերջապես, հասել եւ ժամանակը, յերբ պի-
տի յերես առ յերես կանգնի այդ մարդու
դեմ, անզիմակ, և ասի բոլորը, ինչ վոր
կուտակվել եւ սրտում վերջին յերկու - յերեք
տարվա ընթացքում . . .

XI

Եա ձեռքով տրորեց ճակատն ու աչքերը,
կարծես, ուշը ժողովելու համար։ Աա՛,
այսեմն Սամսոնը նրան բարերարությո՞ւն
և արել, ամուսնանալով նրա հետ։

— Յեթե յերեսովս պիտի տայիր աղքա-
տությունս, ինչո՞ւ ամուսնացար, — դոչեց
նու, — ասա՛, ինչո՞ւ ամուսնացար։

— Յերկի նրա համար, վոր դու ել յե-
րեսովս տաս ծերությունս, — հեղնեց Սամ-
սոնը։

— Յես ունիմ իրավունք, դու չունիս։

Դու քո կամքով ամուսնացար, իսկ ինձ ամուսնացըին։ Հասկացի՞ր զանազանությունը։ Դու ինձ փողով գնեցիր իմ ծնողներից...

— Թող չծախելին... Բայց լոիր, բավական ե:

Լուել։ Վոչ. սուանց այդ ել, յերկար ժամանակ և լուել։ Հիմա առիթ են տալիս իռուսելու, և պիտի խոսի։ Նա միշտ տանջվել է, միշտ, թեև ուրիշները նախանձել են նրան՝ այսինքն նրա աղամանդներին ու տուալետներին, կառքերին ու ձիերին, ճաշերին ու ընթրիքներին։ Նա ծիծաղել է, յերդել, նվազել, թոշկոտել, ըայց տանջվել է։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ ևս տանջվել, — հարցը եց Սամառնը։

— Վորովհետեւ չեմ կարողացել քեզ սիրել, ուզեցել եմ սիրել, չեմ կարողացել։

— Շնորհակալ եմ, վոր գոնե ուզեցել ես սիրել։

— Յես կատակ չեմ անում, — շարունա-

կեց Մելանիան, — սըտիս ցամքն եմ հայոնում :
Մա՛րդ, զու ապրել ես ու վերջացրել
Կյանքդ, իսկ յես նոր եմ սկսում ապրել,
հառկանո՞ւմ ես, նոր-նոր միայն : Զե՞ վոր
յես քսանչորս տարեկան եմ, ա՛նաստված,
թնչպիս առցեմ քեզ Հետ : Ինչո՞վ ես ուզում
ինձ բախտավորեցնել : Բազմաթիվ ծառանե-
րո՞վ, այս շքեղ անո՞վ, թանգարին հա-
զաստներո՞վ, վոսկով ու քարեղենո՞վ :
Լսի՛ր, յես այն կանանցից չեմ, հառկանո՞ւմ
ես, չեմ ել ուզում լինել : Զեմ ուզում ուտել
ամուսնուս հարստությունը, սիրել ուրիշ-
ներին : Ի՞նչ ես աչքերդ պապղացնում : Ի՞նչ
ես կատաղում, մի՞թե չդիտես, վոր կան
այս սեսակ կանայք : Յես ինքս ճանաչում
եմ որիորդներ, վոր յերազում նն դանել
հարուստ ու ծեր ամուսիններ, վորպեսդի
նրանց վողերը ծախսեն, իսկ սիրեն ուրիշնե-
րին : Այս՛, կան, շատ կան այդպիսինները,
քեզ ել ե հայտնի, վոր կան : Բայց յես չեմ

ուզում նրանց որինակին հետեւել, հասկա-
նո՞ւմ ես, չեմ ուզում:

Նա միայն աշխատել ե ինքն իրեն խարել:
Սկզբում, յերբ սկսեց ճանաչել իրեն, հաս-
կանալ իր անբախտությունը, ուզում եր իր
նման շատ-շատերի պես լուռ խոնարհվել ճա-
կատաղը առջեւ: Բայց չկարողացավ: Հետ
փափրագեց աշխարհ տեսնել, իմանալ՝ ինչպես
են առըրում ժամանակակից կանայք: Մի տառ-
վա մեջ նա շատ բան տեսավ, շատ բան ու-
սումնասիրեց և այն, ինչ վոր տեսավ ու ու-
սումնասիրեց, շուտով զզվեցը նրան: Այ-
նուհետեւ աշխատեց գուրիսր խարել հասարա-
կական գործերով: Յեվ ահա կես տարի,
միայն կես տարի անցած՝ այսոր այս ել և
նրան զզվեցնում: Մարդիկ յերեսին կեղծա-
վորում են, յետեից ծաղրում, յերեսին իսե-
լոք ու լուսավորված կին համարում, յե-
տեից—փառամու, parvenue, վայսուկա
նրան չարախոսում են, թե «սիրեկան և
փնտում»: Այժմ նա ուզրում է բոլորից և ա-

մեն բանից յերես դարձնել ու ապրել ինքն իր
սրտի համար, ապրել սիրող կնոջ կյանքով։
Յել հանկարծ...սեր չկա...պահանջ կա,
բայց սեր չկա։ Իսկ քանի վոր սեր չկա, ին-
չի՞ ե նման կյանքը և ի՞նչ ոգուտ հարստու-
թյունից։

— Ասա՛, ի՞նչ ոգուտ։ Զեմ ուզում քո
հարստությունը։ Ճեմ ուզում, յերդվում եմ
Ժորժիկիս տնունով։ Խիր բոլորն ինձանից
և փոխաշենը տուր ինձ կյանք, վո՞չ թե
հարուստ, այլ բախտավոր կյանք։ Յես զդալ
եմ ուզում ու ապրել։ Յես ուզում եմ իմա-
նալ, ինչ ասել և յերիտասարդական սեր,
ինչ ասել և առհասարակ սեր...

— Ասա, վոր ուրիշ տղամարդ ես ուզում, —
ընդհատեց Ստմառնը կոսկուալար։

Յել հոգու խորքում զգաց, վոր զբար-
տում ե։

Մի՞թե յեթե Մելանիան ուրիշ տղամարդ
ուզենա, չի՞ կարող գտնել զաղտնի, և մի՞թե
յեթե այդպիսի հանցավոր միտք ունենա, այդ-

քան պարզ կխոսի: Վո՞չ, Սամսոնն ավելի
ճիշտ կասեր, յեթե դոնե նույն խոսքերն ար-
տասաներ առանց «ուրիշ» բառի:

— Յեթե նույնիսկ այդպես լիներ, — գոչեց
Մելանիան անսովոր համարձակությամբ, —
ի՞նչ կա զարմանալու. միթե չե՞ս զգում, վոր
ունիմ իրավունք:

— Մելանիա, — գոռաց Սամսոնը, բոլո-
րովին բռբռոքվելով խելակորույս կնոջ հան-
դուզն խոսքերից, — խայտառա՞կ կին, բավա-
կա՞ն ե...

— Ի՞նչու խայտառակ: Վոր ուրիշների պես
չեմ թագցնում զգացածս ու մտածածս: Վոր
յերեսիդ չե՞մ շողոքորթում ու յետեիցդ խա-
ռում ու անպատճում քեզ: Ասա՛, դու ինքը
յերիտառարդ հասակումդ չե՞ս սիրել: Յեթե
չես սիրել — դու մարդ չես, յեթե սիրել ես —
ապրել ես: Բայց ի՞նչ եմ ասում: Դու սիրել
ել ես, սիրահարվել ել ու ուրիշ շատ բաներ
ել արել: Միտղ բեք ասածներդ, հիշիր ինչեր
եյիր պատմում յերբեմն, անկեղծության բո-

պեներին։ Աս՛, ամաչո՞ւմ ես։ Ինչո՞ւ չթո-
ղեցիր, վոր յես ել սիրեմ։ Ինչո՞ւ նոր ծլող
ծաղիկը կտրեցիր վոռկի մկրատովդ։ Ինչո՞ւ
ինձ խլեցիր ծնողներիս գրկից այն ժամանակ,
յերբ յես յերեխա եյի։ Ինչո՞ւ, ասա՛, ինչո՞ւ։
Նա թուլացած ընկղմվեց գահավորակի վրա
և սկսեց հեկեկալ։

Սամսոնը մի ձեռը բաղկաթոռի կոնակին
հենած՝ մյուսը սեղմել էր ճակատին և նո-
յում եր հատակի մի կետին։

Հեկեկանքը դադարեց։ Մելանիան, աչքերը
սրբելով, վոտքի կանգնեց, մի վայրկյան
մտածեց՝ անշարժ կանգնած։ Հետո, ձեռով
մի գրական չարժումն անելով, անցավ արագ
քայլերով յուր ննջարանը, վոր կից սենյակին
եր։ Բայց արագ պահարանը, վերցրեց այնտե-
ղից բոլոր յուր ակնեղենները, վերադարձավ
և շպրտեց հատակի վրա, դոչելով։

— Սրանցո՞վ ես պարծենում, սրանցո՞վ։
Վերցրո՞ւ, քեզ լինի, չեմ ուզում...

Այժմ Սամսոնը նստած եր գահավորակի վրա

լուռ, անշարժ։ Զդիտեր ինչ անել, լեզուն կաշ-
 կանդվել եր։ Կնոջ խոսքերի մեջ նա զգում եր
 վորոշ չափի ճշմարտություն, մանավանդ իր
 անցյալի վերաբերմամբ, վորի դառն հե-
 տեանքը կրում եր այժմ։ Գունատ եր, վոր-
 պես աշնան ծառից պոկված տերե։ Աչքերը
 անդիտակցարար հառեց ցիրուցան սփռված ո-
 ղերի ապարանջանների, վզնոցների, մասա-
 նիների ու քորոցների վրա, վորոնց խոշոր ու
 մանր աղամմանդները գորդի վրա պսպղում
 ելին նուրբ մանիշակաղույն փայլով։ Յեվ,
 կարծես, այս շինծու աստղերի մեջ եր վո-
 րոնում իր թշվառության հիմքը։ Միթե այս-
 պես չե՞։ Միթե իր կյանքի լավաղույն շրջա-
 նը այս սոլամանդներին տիրանալու համար
 չե՞ր գործադրել։ Նա կամեցավ առաջ հարըս-
 տանալ, հետո բախտավորվել։ Ի՞նչպես չհաս-
 կացավ, վոր տիրելով մեկին, զրկվում է
 մյուսից, որեցոր քայլարվում և, գլուխը քաշ
 վոսկիներ հավաքելով, անդիտակցարար, մեր-
 ձենում և դերեղմանին։

Ի՞նչողես չկուշամկեց, թե վտղով կյանք չի
կարելի դնել, թե ժամանակը գետ է, վորի
ջուրը յերեք հետ չի դառնում: Ինչո՞ւ յուր
զոյության վառվոուն շրջանը անցկացրեց սի-
րուհիների ու անառակ կանանց զրկերում,
իսկ կնոջ համար պահեց նրա վողորմելի
մացարդը: Յել ահա այսոր նրա յերեսին են
շպրտում այս աղամանդներն ու փոխարենը
պահանջում յերիտասարդություն... առնա-
կան ուժ: Պահանջում ե այն, վոր նա միայն
ունի իրավունք պահանջնելու, վորովհետեւ նա
սիրուհի չե, այլ կյանքի հավիտենական ըն-
կերուհի...

— Շնորհակալ եմ, — հնչեց նրա ականջին
Մելանիայի արդեն փոքր ինչ հանդարտված
ձայնը, — շնորհակալ եմ արած լավություն-
ներիդ համար: Բայց այսուհետեւ չշարունա-
կես, խնդրում եմ, պահանջում: Այժմ քո բա-
րերարությունը ինձ առնջում ե, հասկանո՞ւմ
ես, ուղղակի տանջում...

Յեկ, մի վաղից յան կանդ առնելով, ազեւացրեց.

— Վաղը կրտեմ ծնողներիո, վոր այսուհետեւ ել իրավունք չունեն քեզանից ոգնություն ստանալու; Յես չեմ ուզում հարստահարվել, դու ել մի՛ հարստահարվիր . . .

XII

Մելանիան կատարեց իր խոսքը: Հետևյալ որն իսկ գրեց մանրամասն նամակ մորը: Նկարադրեց իր ընդհարումը Սամսոնի հետ. պարզեց մինչև այժմ գաղտնի պահած վիշտը, վերջապես, հայտնից պարզապես, թե այժմ անբախտ ե, այնքան անբախտ, վոր հաղիլ թե կարողանաւ այսուհետեւ ապրել այդ մարդու հետ:

Յերեք որ անցած՝ պատասխանի փոխարեն անձամբ յեկան նրա ծնողները: Յերեկի, արդեն շատ ազդու յեր դրված Մելանիայի նամակը: Դա մի վոչ այնքան ծեր զույգ եր—մարդը գերդեր, մոտ հիսուն տա-

րեկան, կինը մարդուց հսողիվ չորս-հինգ տարով փոքր, տակավին թարմ, նույնիսկ դեղեցիկ:

Նրանք անմիջապես բացատրություն պահանջեցին իրենց աղջկանից: Մելանիան ասաց, թե բոլորը գրել ե նամակում և ուրիշ ասելիք չունի:

Սամսոնը ընդունեց իր զոքանչին ու աներոջը սառը, չկամեցավ նրանց հետ խոսել իր ընտանեկան ընդհարման մասին: Զույգը վշտացավ: Հետևյալորոշ նա վորոշեց խնդիրը, ինչպես ել լինի, բոլորովին պարզել: Այս անդամ Մելանիան համառոտ ու դրական յեղանակով կրկնեց բոլորը, ինչ վոր գրել եր նստմակում: Նա այլևս չի կարող Սամսոնի հետ ապրել, նրա հացն ուտել. խիղճը տանջում է, զդում և իրեն ստորացած մի մարդու առջև, վորին չի սիրում և յերբեք չի սիրել և չի կարող սիրել:

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, — դոչեց տիկին Նաղանին, Մելանիայի մայրը,

— Վորովհետեւ ծեր և, — պատասխանեց Մելանիան այնքան լուրջ ու կտրուկ յեղանակով, վոր թույլ չեր տալիս վոչ մի հակածառություն:

— Հը՞ք, — վիճինթաց Սերգեյ Արտեմիչը, Մելանիայի հայրը, — լա՛վ պատճառ ե, որհնյա՞լ լինիս:

Մելանիան մի սուր հանդիմանական հայցք ձգեց հոր յերեսին և հարցրեց,

— Քանի՞ տարեկան ես, պապա:

— Քառասուն ու իննս լրացավ անցյալ ամիս:

— Իսկ դո՞ւ, մամա:

— Քառասունչորս:

— Քառասունինը — քառասունչորս, զանազանությունը հինգ տարի. հիսուն ու յերկու — քառանուչորս զանազանությունը քսան և ութ տարի: Պապա, աղջկադ ամուսինը քեզանից հինգ տարով ծեր է: Ասա, ինչո՞ւ ինձ տվեցիր այդ մարդուն:

— Մամսոն ֆրանկուլյանը քաղաքի ամե-

նալսով վեսացուներից մեկն եր . իմելոք , ս-
րինավոր մարդ ու միլիոնների տեր . . .

— Յեվ ծեր , — ավելացրեց Մելանիան անսո-
վոր համառությամբ :

— Զեմ հասկանում , ինչ ես մի գլուխ
կրկնում ծե՛ր , ծե՛ր ու ծե՛ր , — զոչեց տիկին
Նաղանին , — լա՞վ կլիներ՝ յեթե քեզ տված
լինելինք մի քաղցած յերիտասարդի :

— Այո , մամա , ավելի լավ կլիներ :

— Այժմ յան փշացած յերիտասարդներից
մեկին , — հարցրեց Սերգեյ Արտեմիչը :

— Թեկուղ մի շարլատանի , — պնդեց Մե-
լանիան նույն համառությամբ :

— Սերգեյ , — դարձավ տիկին Նաղանին իր
կողակցին , — դու հեռացեր , թող մեզ մենակ :

Սերգեյ Արտեմիչը հասկացավ ամուսնու
միտքը և շոտարեց կատարել նրա հրամանը :

Նաղանին նստեցրեց աղջկան իր մոտ , գա-
հավորակի վրա և մի ձեռով դրկեց նրա մեջ-
քը , մյուսով չոյելով մազերը , ասաց .

— Հիմա կարող ես սիրող բաց անել :

Յես կնիկ եմ, ամեն բան կհասկանամ, մի՛
ամաչիր:

— Մա՛մա, թո՛ղ ինձ, — արտասանեց Մե-
լանիան, յԵրեսն ամոթնվ մի կողմ դարձնե-
լով, — առ անց աշդ ել յԵս շատ բան ասացի:

Տիկին Նազանին բարկոք համարեց ուղ-
ղակի գիմել բուն խնդրին:

— Մելա՛նիա, — ասաց նա, հառաչելով, — մի
բան հարցնեմ, չնեղանաս: Ասա՛, քեզ խելքից
հանող չկա՞: Եհ, ո՛վ գիտե, թիֆլիսն ե:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Եհ, մեջտեղ մի ուրիշ տղամարդ չկա՞:

— Հըմ, — արտասանեց Մելանիան, դառ-
նությամբ գլուխը յերերելով, — գիտեյի, վոր
ա՛յդ պիտի հարցնես: Վո՛չ, մամա, յես վոչ
վոքի չեմ սիրում և չեմ ել ուզում սիրել,
բանի վոր այս տանն եմ ապրում:

— Յերդվիր:

— Յերդվում եմ ժորժիկիս անունով:

— Վոչ վոքի չես սիրում ու ելի մարդուդ

Հետ չես ուզում ապրել։ Զեմ հասկանում։
Ծեծո՞ւմ ե քեզ Սամառնը։

— Ցերանի թե ծեծեր . . .

— Հետդ վա՞տ և վարվում։

— Վո՞չ։

— Ատո՞ւմ ե քեզ։

— Բնդհակառակը. Հիմա ավելի և սիրում։

— Ազատություն չի՞ տալիս։

— Այնքան և տալիս, վոր յես ինքս դբդ-
վել եմ։

— Սրտիդ ուզածը չի՞ կատարում։

— Կատարում ե։

— Կարելի ի՞ սիրուհինե՞ր և պահում։

— Վո՞չ, վո՞չ, մամա, այդ բոլորից և վո՞չ
մեկը։

— Ուրեմն կամ յես ծերացել եմ ու վոչինչ
չեմ հասկանում, կամ դու խելաղարվել ես։

— Մամա', միամիտ մի՛ ձեանար, դու եւ
կին ես, հասկացիիր դրությունն։ Մի բողե
միտդ բեր այն ժամանակը, յերբ դու իմ հա-
սակի եյիր։ Միտդ բեր ու յերեակայիր քեզ

մի հիսուներկու տարեկան մարդու դրկում :

— Հիսուներկու տարին աղամարդի համար ծերություն չե :

— Բայց . . . Սամսոնը ծեր և, հասկացի՛ր, ծեր . . . :

— Այդ վոչ վոք չի կարող ասել, նրան տեսնելով :

— Բայց յե՞ս եմ ասում, հասկանո՞ւմ ես, յե՞ս . . . Ա՛խ, մամա, ի սեր ասածու չ խնայի՛ր ի՞նձ, մի՛ ստիպիր . . .

Մայրը նայեց աղջկա աչքերին և այնտեղ կարդաց նրա խոսքի վերջը : Նա գլուխն անդոր թիւքեց կրծքին :

— Ուրեմն, — արտասանեց նա կակազելով, — ուրեմն . . . Մելանիա . . .

— Յերեխանե՞ը . . . առաջ, մամա, բայց հիմա . . . Ահ, բավակա՞ն ե, վերջապես . . .

Այն, ինչ վոր արտահայտում ելին յերետասարդ կնոջ հուսահատական շարժումները, այնքան համողիչ ելին և այնքան միևնույն ժամանակ վշտալի, վոր Նազարին բոլորովին

զինաթափ յեղավ և ուժասպառ թիկն տվեց
գահավորակին։ Ավելի՛ նա զգաց խղճի խայթ։
զղաց և կարեկցեց աղջկան։

Նույն որն յերեկոյան նա առանձնացավ իր
կողակցի հետ, յերկար ու յերկար խորհրդակ-
ցեց։ Բայց խնդիրն անլուծելի յեր։ Տիկին Նա-
զանին փորձեց մարդուն համոզել՝ Աամսոնից
բացառություն պահանջելու։ Սերդեյ Ար-
տեմիչը դրականապես մերժեց։

— Ամոթ եւ ասաց նա, — վոր Հարցնեմ ել,
միւնույն եւ, վոչինչ չի ասիլ…

— Հապա ի՞նչ անենք։

— Զգիտեմ։

Յերկուսն ել անզեն ու անզոր նայեցին մի-
մյանց յերեսին։ Յերկուսն ել զգացին, վոր
զործված սխալն անուղղելի եւ վոր իրանք
իրանց ձեռքով դժբախտացրել են իրանց հա-
րազատ զավակին…

XIII

Սուր վիրավորանքի հետ Սամսոնը զգում էր նաև խղճի սուր խայթոց : Վորքան համարձակ լինելին Մելանիայի խոսքերը, այնքան խմաստն արդարացի յեր : Մեղաղրանքը պարզ էր, հիմնավոր և . . . անհերքելի : Ա՛խ, յեթե միայն ծերությունը լիներ . . . Բայց ի՞նչ կարելի յե առարկել մի անողոքու ոսկալի փատի դեմ, վորի ծանրությունը նա զգում է առանց Մելանիայի մութ ակնարկների ել : Ինչո՞վ իրան պաշտպանի, քանի վոր դիտե՞սիրելը քիչ է, պետք եւ ունենալ նաև սիրելու իրավունք, այսինքն միջոց :

Դեռ ամուսնության յերկրորդ տարին նա զգաց, վոր շուտով պիտի զրկվի այդ միջոցից : Յեզ յերբ զգաց, վոր սկսում է զրբկել, շատ մտածեց, շատ աշխատեց ու չդըտավ վոչ մի հնար բնության հարվածի դեմ : Նա համողվեց, վերջապես, վոր վոչ վոք, վոչ վոք չի կարող ողնել իրեն այս դեպ-

քում, թեկուզ զոհի իր բոլոր միլիոնները: Ճակատագրի դա՛ռն հեղնանք. անբախտությունը ոկսվեց հենց այն պահուն, յերբ նա հույս ուներ ապրել մի նոր, ավելի հանգիստ, ավելի յերջանիկ կյանքով . . .

Ի՞նչ անել այժմ, յերբ նրանից պահանջվում է անկարելին: Բաժանվե՞լ Մելանիայից, աղատությո՞ւն տալ պահանջողին՝ գնա ուր ուղում և ապրի, ում հետ նա կամենում է: Բավականանա՞լ ամուսնական կյանքի այն առաջին յերկու-յերեք կիսաբախտավոր տարիներով, յերբ դեռ ուներ փոքրի իշտե իրսովունք իրին ամուսին:

Մի պահ զգաց, վոր յեթե բարոյական քաջություն ունենա, պարտավոր և աղղակես անել. չե՞ վոր չի կարելի առանց իրավունքի, բոնի տիրանալ մի թարմ եյակի կյանքին: Ասկայն . . . միայն մի պահ, հետո ինքը սարսափեց իր մտքից: Բաժանվե՞լ Մելանիայից, մի եյսկից, վոր զարդարում և նրա կյանքը և հյութ տալիս նրա չոր ու յամաք զոյությա-

նը։ Գցել նրան մի ուրիշի գիրկը և, գիտելով
հեռվից, տանջվե՞լ բարոյապես, դառնալ
ծաղրի ու խոսակցության առարկա՛... Ո՞ս,
վոչ, վոչ, այդ անկարելի յե, այդ վեր և նրա
ուժերից։ Ուրեմն ի՞նչ. ստիպել յերիտասարդ
կնոջը կենակցե՞լ իր հետ, մի մարդո՞ւ, վորին
չի սիրում և յերբեք չէ՝ կարող սիրել, դուցե,
իրավ, հակառակ իր ջերմ ցանկության։ Մի-
թե անդթությո՞մ չե այդ։ Իսկ նա վոչ մի-
այն գործում և այդպիսի անդթություն, այլ
և Մելանիայի յերեսովն և տալիս այդ ան-
դթությունը, համարելով նրան բարերարու-
թյուն։

Յեվ, հալածվելով այս մտքերից, Սամսոնը
տանջվում եր։ Արդեն առաջ ել չեր սիրում
հասարակություն, իսկ այժմ բոլորովին յերես
դարձրեց նրանցից։ Վոչ մի տեղ չեր զնում,
վոչ վոքի չեր ընդունում, իսկ աներոջ ու զո-
քարնչի հետ խոսել անդամ չեր ուզում։
Բնադրմամբ զուշակում եր, վոր Մելանիան
պարզել եր նրանց իր վշտի դադանի պատ-

ձառը . մի բան , վորից այնքան ամաչում եր
Ասմասնը : Ա՛հ , սարսափելի՛ դրություն . ո՞ւմ
հայտնի իր ցավը , ո՞վ կկարեկցի նրան և ,
վոր ամենագլխավորն ե , ո՞վ կարդարացնի
նրա կապը Մելանիայի հետ : Վոչ վոք : Նա այս
լավ գիտեր , ուստի լուս ու մունջ փակվել
եր ինքն իր մեջ : Յեցրեմն նրա սրտում ծա-
գում եր հուսո նշույլ . գուցե Մելանիան
զղա , ներում խնդրի անողոք կշտամբանքէ
համար և հաշտվի իր վիճակի հետ , դադարե-
լով պահանջել անկարելին , անբնականը ։
Բայց այս հույսն ել նրան վոչինչ ապագա չեր
խոստանում : «Հետո՞» . . . կրկնում եր նա , և
գլուխը թուլացած թեքվում եր կրծքին , ձեռ-
ները բնկնում եյին ցած : Այո՞ , հետո՞ , իսկ
նրա անզորությունը , վոր անբուժելի յե . . .

Տիկին Նաղանին և Սերգեյ Արտեմիչը բար-
վոք համարեցին խնդիրը թողնել անորոշ և
հեռանազ այն քաղաքը , վորտեղից յեկել եյին :
Զգում եյին , վոր իրենց ներկայությունը ան-
շափ նեղում է Սամսոնին , այնինչ ցավը դար-

ժանելու և վոչ մի միջոց չելին կարողանում դանել :

Ճանապարհ ընկնելու որը Նազանին մի անգամ ևս փորձեց համոզել Մելանիային, թե ուրիշ հնարք չկա, ակառք և հպատակվել ճակատաղբին : Բայց զուր : Մելանիան սառն յեղանակով հարցրեց .

— Մամա, յեթե մի որ վերադառնամ քեզ մոտ, կընդունե՞մ ինձ :

Նազանին սարսափեց : Բայց զդում եր, վոր դուստրը արդեն անսահման դժբախտ է, ուստի ճարահատյալ որատասխանեց .

— Վո՞ր ծնողը իր զավակին կթողնի փողոցում :

Մելանիան զգացվեց, վաթաթվեց մոր պարանոցին, համբուրեց և հետո սկսեց հեկեկալ, կրկնելով .

— Այս, ի՞նչ անբախտն եմ, ի՞նչ անբախտն եմ :

Մի որ, նախաճաշից առաջ սպասավորը Սամսոնին հայտնեց, թե Փիրուզյանը հարց-

նում ե՝ կընդունի՞ նրան արդյոք։ Սամսոնը
հրամայեց ընդունել։

Փիրուղյանը ներս մտավ նախկին բարեկա-
մական ժպիտն յերեսին, ամուր սեղմեց իր
ազգականի ձեռը և նստեց նրա դիմ ու դիմ։
Սամսոնը, վոր գրասեղանի քով դրադիմած եր
ինչպոր հաշխիներով, թերթերը հավաքեց,
մի կողմ դրեց և հարցրեց՝ ուր ե մնացել մին-
չե այժմ հյուրը։ Հայտնիեց, վոր Փիրուղյա-
նը վերջին յերկու շաբաթը անց ե կացրել
ֆադվում, միայն այսոր առավոտ ե վերա-
դարձել։ Նա վճռել է նաև թային դործերով
զբաղվել և յեկել է Սամսոնի աջակցությունը
խնդրելու։

Սամսոնին հայտնեցին, թե նախաճաշը
պատրաստ է։ Նա հյուրի հետ անցավ սեղա-
նատուն։ Այնուեղ Մելանիան, աւանի քով
նստած, կերակրում էր Ժորժիկին։ Նա հյու-
րին ընդունեց անխոռվ, դիմի թեթև շաբ-
ժումով պատասխանելով նրա խոնարհ բա-
րեին։

Փիբուղյանն իսկույն դուշակեց, վոր մարդ
ու կնոջ հարաբերությունները լարված են ։
Հոգու խորքում այս անդամ անկեղծ խղճաց
Սամսոնին, նայելով նրա անսովոր մռայլ
դեմքին։ Նա խոսում եր նավթային նոր շա-
տըրվանների և արդյունաբերական աժխոսա-
ժի մասին։

Հանկարծ նա զղաց խղճի խայթ յուր հան-
ցավոր միտումների սղատմառով։ Նա զղջաց-
բայց զղջաց վո՞չ այնքան վորեւ բարոյական
սկզբունքի հիման վրա, վորքան այն մտքից,
վոր զուր եցին իր հանդուգն միտումները և
յերրեք չեն կարող իրառործվել։ Մելանիայի
ամբողջ եյությունը հասկացնել եր տալիս
նրան, թե չեղել այդ կնոջն ուղիղ ճանա-
պարհից շատ ել դյուրին չե և թե ինքը
շատ ել ճիշտ գաղափար չի ունեցել նրա
մասին։

Նա վորոշեց զգույշ վարվել։ Ինչո՞ւ զուր
տեղը զրկվի Սամսոն Ֆըանգուլյանի պես մի
հզոր դրամատիրոջ բարեկամությունից այն

Ժամանակ, յերբ իր նոր ձեռնարկելի դործի Համար կարուտ և նրա աջակցությանը։ Նա աշխատեց ցույց տալ անտարբերություն դեպի Մելանիան և կարողացավ Սամսոնի սրտից ջնջել չար կառկածի վերջին նշույլը։

Մի շաբաթ անցած՝ նա դարձյալ այցելեց Ֆրանգուլյաններին։ Այս անդամ յեկել եր վերջին հրաժեշտը տալու։ Նա թողնում է Թիֆլիսը ու հեռանում Բաղու յերկար ժամանակով։

XIV

Խորհում եր Մելանիան դիմեր ու ցերեկ և չեր կարողանում վորեե վորոշում կայացնել։ Նա որ որի վրա ավելի յեր համոզվում, վոր չեր կարող յերկար ժամանակ մնալ անորոշ ու ծայր սատիճան լարված դրության մեջ։ Նա զգում եր, վոր Սամսոնը նրա համար ոտարանում և վոչ որերով, այլ ժամերով և հեռանում և անվերադարձ։ Յերկու ամուսինների մեջ քարձրանում եր մի պատճե,

վորին չեր կարող խորտակել վոչ մի առողջ
 բանականություն։ Յեվ Մելանիան սկսեց վա-
 խենալ Սամսոնից, առաջին անդամ զգալով
 նրա տանջալի լոռության մեջ ինչ-վոր չարա-
 գուշակ մի բան։ Մնալ այդ մարդու հետ մի
 հարկի տակ՝ թվում եր նրան և՛ վտանգավոր,
 և՛ զազրելի։ Ի՞նչ անել, արդյոք, թողնել նը-
 րան և վերադառնալ ծնողների՞ մոտ, թե՞
 զիմել այն ապորինի, այն վատթար և այն
 սովորական դարձուծ միջոցին իր զբության
 հետ պայմանավորվելու համար, վորին դե-
 մում են շատ շատերը։ Դավաճանության։
 Դժվար իրադործելի յեր թե՛ մեկը թե՛ մյու-
 սը։ Ի՞նչ պիտի պատասխաներ հարյուրավոր
 հետաքրքրվողների հարցին—«ինչո՞ւ բաժան-
 վեցիր»։ Պատճառ պիտի բերեր Սոմսոնի ծե-
 րությունը։ Բայց չե՞ վոր նրանք կարող ե-
 յին ասել՝ «ո՞ւր եր քո խելքը աշուսնանա-
 լիս»։ Առարկել նրա ֆիզիքական անկարողու-
 թյունը։ Ոո, վոչ, այդ ամոթալի յե և նա
 չի կարող կրել հասարակության ծաղրն ու

ծիծաղը : Իսկ մնալով որինական ամուսնու հարկի տակ, ուղել նրա մահը, խաբել ու դալաճանել, գեմ եր նրա ամրող Եյությանը և կրկնակի վտանգավոր . . .

Յեվ այսողես, այս յերկղիմի դրության մեջ Մելանիան տառապում եր անսահման :

Այն ինչ Սամսոնը՝ սիրելով Մելանիային դաժան սիրով՝ կատաղում եր ժամանակի և քնության գեմ այնողես, վոր կարծես, նրանց անողոք որենքները հատկապես նրա համար ելին հորինված : Նա անիծում եր մարդկությունը և նրա հնաբած բոլոր զիտությունները, վոր անզոր Ելին նրա անզորության գեմ : Յեվ աշխարհը նրան թվում եր սառն, անհյուրընկալ : Կյանքի նյութական շուքի մեջ զգում եր իրան խորթ, յեկվոր և հարստության մեջ չքավոր, վորպես մի արհամարհված մուրացիկ : Գարնան մերձավորությունը բորբոքելով նրա որոքի վրա սառչող արյունը, ավելի դղալի և ավելի դաժան եր դարձնում անփոխարինելի:

կորուստը : Յեկ , մարդկանցից վախչելով ,
 ինքն իր մեջ զգում եր այնպիսի ամառու-
 թյուն , վոր կարծես , հոգին բաժանվել եր և
 դիտում եր մարմնի սառուցումը հեռվից : Ին-
 դանի կմախք , վոր այրվում եր առանց ջեր-
 մանալու : Նա հոգու ամբողջ կարողությամբ
 ատում եր լճությունը և բոլորը ինչ վոր նո-
 րովվում ու թարմանում եր նրա մեջ : Ծառե-
 րի նորածիլ տերեները , ծտերի ծլվլոցը , յե-
 զանակի վափկությունը , յերկնի ոլայծառու-
 թյունը և յերկրի ժպիտը , բոլորը , բոլորը ,
 կարծես , ծաղրում եյին նրան անողոք և անո-
 մոթ ծաղրով : Նա կկամենար տեսնել ամեն
 ինչ հնացած , թառամած և անզոր , ինչպես
 ինքը : Նա պատրաստ էր , յեթե ունենար գերբ-
 նական զորություն , մի հարվածով մեացնե-
 րուր կենդանի եյտեների մեջ կյանքը և բո-
 լորին դարձնել իր պես այրվող կմախք :

Նա սկսեց ատել Մելանիային , չղաղարելով
 սիրել նրան անզոր սիրով : Յերկու հակառիք ,
 միմյանց ջնջող զգացումների մեջ բաժանվեց

յերկու տարբեր մասերի։ Մի ներքին ուժ-
գրղում եր նրան, ամեն անդամ Մելանիային
հանդիպելիս՝ փախաթվել նրա պարանոցին և
անվերջ համբուրել, շոյել, միանալ ու ձուլ-
վել նրա հետ մեռելության ձուլարանում։
Մի ուրիշ ներքին ուժ թելաղբում եր նրան.
«Հարձակվեր այդ յերիտասարդ կնոջ վրա,
բոնիր նրա դեղեցիկ կոկորդը, խեղդիր, սպա-
նիր և հետո սիրիր... նրա դերեզմանը»...

Այլևս պարզ եր նրա համար, վոր յուր սի-
րո զգացման ամենաթույլ մի արտահայտու-
թյուն Մելանիային պատճառում ե զդլանք։
Եեվ խոցոտված և արյունոտված ինքնասի-
րությունը ուժ եր տալիս նրան այդ զգացումը
զսպելու, մինչդեռ ատելության բուն զգաց-
ման դեմ որ որի վրա դառնում եր անզոր,
անպաշտպան։ Նրա գլխի մեջ ծաղում ելին
ժեկը մյուսից մոայլ մտքեր, վորոնք դլխա-
վորակես պտտում եյին մի առանցքի շուր-
ջը։ Այդ առանցքը Մելանիայի յերիտասար-
դությունն եր, մանավանդ դեղեցկությունը։

Առ՝ անտեսանելի, անըմբոնելի դորություն,
յեթե չես կարող վերադարձնել նրա կորցրած
առնականությունը, դարձրու այդ կնոջը նրա
հասակին ու թառամած արյունին համապա-
տասխան մի եցակ։ Այս, թող այժմ Մելա-
նիան զրկվի իր գեղեցկությունից, վորպեսզի
նա այդքան չուրվի և վորպեսզի Սամսոնը
այդքան չտանջվի, այսքան չխանդի և վոր-
պեսզի ամեն վայրկյան չմտածե՝ արդյոք Մե-
լանիան մի ուրիշին չի՞ սիրում։

Մելանիայի ներքին անբացառքելի ահը դար-
դանում եր որ որի վրա։ Այժմ ամեն անդամ
Սամսոնին տեսնելիս՝ ցնցվում եր։ Արդեն նա
իր անկողնակալը փոխադրել եր մի ուրիշ
սենյակ և դիշերում եր առանձին և յեթե չը-
քաշվեր, ամեն դիշեր կկողպեր իր ննջարանի
դռները։ Հակառակ նախկին սովորության
մերթ ընդ մերթ նա դիշերները հանկարծակի
արթնանում եր և միշտ ականջ դնում դեսպի-
կից սենյակը, ուր գիշերում եր Սամսոնը։
Ինքը Սամսոնը աշխատում եր շատ անդամ

իրան նրանից հեռու պահել նամանավանդ այն
պահերին, յերբ ատելության զգացումը ըոր-
բոքվում էր նրա մեջ առանձին ուժով։ Այդ
մոմենտներին մի շատ դաժան ցանկություն
կանում էր նրա հոգին և խլացնում առող-
ջամտության ձայնը։ Նրա բանականությունը
մթաղնում էր և նրա առջև պատկերանում էր
Մելանիայի տալանդակված մարմինը, ոռ, վոչ
ամբողջը, այլ միայն յերեսը... ԶԼՇ վոր այս-
պիսով և միայն այսպիսով կարող ել լուծվել
անլուծելին։

Նա լուռ պայքարում էր մի դիվային ցան-
կության դեմ, վոր սակայն դարդանում էր
որ որի, ժամ ժամի վրա, և ավելի ու ավելի
յենթարկում նրան իր դորությանը... .

XV

Գիշերվա յերեք ժամն էր։ Սամսոնը դեռ
անքուն էր իր սենյակում։ Սեղանի վրա վառ-
վում էր փոքրիկ լամպարը, աղոտ լուսավո-
րելով նրա մռայլ կերպարանքը։ Նա պառկած

Եր թիկնիվար տաճկական բաղմոցի վրա, ձեռները դլխատակը դրած։ Կար այդ պահին ինչ-վոր հրող շերտ նրա դեմքի վրա և աչքերի մեջ։

Նա վոտքի յելալ և սկսեց անց ու դարձ անել։ Մերթ նո կրծոտում եր շրթունքները, մերթ ծանր հառաջում եր, մերթ նրա աչքերը պաղղում եյին, մերթ կարծես մարում ինչոքս հեռավոր փարոսի լույսը։

Նա վերցրեց սեղանի վրայից լսոմպարը, անցավ հաջորդ սենյակ, իր ննջարանը։ Այժմ այնուեղ յերկուսի փոխարեն դրված եր միայն մի անկողնակալ, այժմ նա սառն եր, անհյուրզնակալ, առ միշտ զրկված կյանքի մի ժամանակվա ջելօմությունից։ Նա սկսեց ծուլորեն կամաց կամաց հանել հագուստը։ Դուրս բերեց ժիլետի գրալանից ժամացույցը, նայեց, դրեց անկողնակալի դլխի քով դտնվող փոքրիկ սեղանի վրա։ Գիշերվա յերկու ու կես ժամն եր։ Յերբեք նա այդպես ուշ չեր պատրաստվել անկողին մտնելու։ Նա դեն ձգեց

փողկարպը, հանեց կոչվիկները, հաղավ հողաթափերը և դարձյալ սկսեց անց ու դարձ առնել: Յերկու անգամ նա մոտեցավ դռներին և ականջ դրեց հաջորդ սենյակը, վոր սուաջ ժորժիկներ, այժմ Մելանիային ծառայում էր վորապես ննջարան:

Գիշերային անդորր լուռեթյան մեջ լսվում էր յերխառաստրդ կնոջ սոսող ու կանոնավոր շնչառությունը: Նա քնած էր խորը քնով—գոնե այնպես թվաց Սամսոնին, յերբ կիսով չափ բաց արավ դռները և նայեց: Փոքրիկ սեղանի վրա վառվում էր այն գեղեցիկ լամպարիկը՝ վարդապոյն լուսամփոփով, վորելուսով Սամսոնը շատ անգամ էր սքանչացել Մելանիայի մարմնի գեղեցկությամբ: Բայց յերբեք, յերբեք այդ մարմինը չեր յեղել նրա աչքում այդքան գեղեցիկ, վորքան այդ գեղերը: Մետաքսյա դեմի-սեզոն վերմակի մի ծայրը հետ էր ծարվիլ և ցուցադրել նրա ուռուցիկ կուրծքը, վորի վրա հանգչում ելինիսիո մազերի ալիքավոր հյուսերը: Վերև

այդ մաղերը կազմում ելին մթին շրջանակի նման սքանչելի մի պոտկ: Աջ ձեռքը հանգիստ տարածված եր կողքով, իսկ ձախ ձեռք զվարացու շուրջը կազմում եր մի ուրիշ շրջանակ: Կենսասիրության հաղուրդ չստացած ժողովն եր յերեսում Մելանիայի հեշտացն շրթունքների վրա:

Սամսոնը ներս մտավ կամացուկ, վորոկս մի հանցավոր՝ սրբության սահարը: Նա դաշտիս եր վոչ իր հանցանքները խոստովանելու ու քավելու, այլ գործելու մի նորը և այնպիսին, վորի նմանը յերբեք չեր գործել—տաճարից զողանալու այն, ինչ վոր ամենասուրբն եր, ամենաթանգարժեքը: Քանի մի վայրկյան նա նայեց Մելանիայի դեմքին: Նայեց այնպիս, վորոկս անոթի գայլը համեղ պատառի վրա, վորին ճաշակելու կարողությունից դուրկ է: Նա սքանչանում եր և տանջվում: Այնինչ՝ դիվային միտքը պաշարում եր նրան ուժովին, և նա զգում եր իր անզորությունը նրանից ազատվելու: Այո, այս,

այդ կինը շատ յերիտասարդ է, շատ սիրուն,
շատ հրապութիչ, շատ կենսաթրթիռ և շատ
խստապահանջ իր մարմնավոր յերջանկու-
թյան վերաբերմամբ։ Նա չի կարող իր այլ-
վող արյունը խառնել մի անգորի ցրտության
և աղիկարության հետ։ Նա պիտի մինտուն
մի ուրիշին, այս են պահանջում բնության
որևէքները և այս և զրոշմված Մերանիայի
ախտարրորդ մարմնի ամբողջության վրա։
Գուցե արդեն փնտուում է, գուցե արդեն զը-
սել է։ Ի՞նչ, դրկվել այդպիսի մի զանձից,
զառնալ խարված ամուսին, ծաղրված ու ծա-
ղակոծված ամենից։ Ոո, վոչ, վոչ, վոչ այդ
անկարելի յե և յերբեք չպիտի թույլ տալ...

Սակայն ինչոքե՞ս դիմադրել բնության պա-
հանջի զորությանը. ի՞նչպես այդ կնօցն ա-
պահովել մոլորությունից։ Միայն մի միջոց
կա ապահովության— այլանդակել այդ զմայ-
լելի մալոմինն այնպես, վոր վոչ վոք չհրա-
պուրվի նրանով և վոչ վոք չկամենա նրան
մերձենալ, բացի իր որինական տիրոջից։ Այն

ժամանակ Մելանիան ստիպված կլինի սիրել
Սամսոնին և միայն նրան :

Նա սարսափեց, մտածելով, վոր այն, ինչ
վոր չի ուզում անել դերբնական ուժը, պիտի
անե ինքը... իր ձեռքով : Սարսափեց, բայց
չփախավ դիմային մտքից, վոր ընդամենը մի-
շաբաթ եր, վոր հղացել եր և այժմ ձգտում
եր իրադրութել դիշերային լուռթյան մեջ,
յերբ տանը ամենքը քնած են : Վոճիրը սոսկա-
լի յե, հակամարդկային և հակաբնական,
բայց նա չի ուղղված այդ դեղեցիկ Երակի-
դիմ : Նա կապրի, բայց իր դեղեցկությունից
զրկված :

Նա նայեց յերկարաժամկե հայացքով Մելա-
նիայի սիրուն հոնքերին, վորոնցով շատ ան-
դամ եր հիացել : Ահա վորտեղ և նրա դեղեց-
կությունը, ահա ինչն և սպելի դյուրին աղա-
վաղել : Բավական ե մատների մի թեթև շ-
փում և նա կիսախոռվի հավերտյան...

Սամսոնը ձեռը տարավ վարտիքի դրումը:
Այժմ նա այլևս ինքն իրան չեր պատկանում:

Նա դուրս բերեց զբանից մի փոքրիկ սրվակ և մի կտոր բամբակ: Նա ինքը կսարսափեր իրենից, յեթե այդ պահին նայեր հայելուն Նա ուշադիր կարդաց սրվակի խորագիրը և դլուխը դրականորեն շարժեց:

Մելանիան շարունակում էր հանդիսա քնել միւնույն դիրքում: Թովում էր՝ մի ինչ-վոր խորն յերազ ընդգրկել և նրան իր անշարժության մեջ:

Սամսոնը դուրս բերեց սրվակի խցանը և պատրաստվում էր հեղուկը կաթեցնել մյուս ձեռում բռնած բամբակի վրա նույն պահին, յերբ Մելանիան ծանր հառաջելով, շարժվեց: Սամսոնը կանդ առաջ և, սրվակը գըրպանը դնելով, նայեց: Այժմ Մելանիան յերեսը դարձրել էր դեսպի պատը, բայց դարձյալ քնած էր խորը քնով: Այս անդամ նրա շքեղ գիսակները հեռացել եյին ուսերից և թափվել բարձի վրա: Նրանց փարթամությունը դայրացը Սամսոնին: Ակամա նրա հայացքը դարձավ դեսպի կնոջ տուալետի սեղանը և

կանգ առավ մի հարդյա զամբյուղակի վրա։
 Նու հուշիկ քայլերով մոտեցավ սեղանիկին,
 շոշափեց զամբյուղակը, վոր լի յեր թերի կա-
 պոցներով, ասեղներով, կոճակներով և այլ
 մանր-մունր իրերով։ Լսվեց պսպղուն մկրա-
 տի սուր հնչյունը, վորից Սամսոնը ցնցվեց
 այնպես, վորսպիս կարող և ցնցվել մարդը ոճի
 մերձավոր շվվոցից։ Նա դարձյալ նայեց Մե-
 լանիայի մաղերին և, մկրատը վերցնելով,
 մոտեցավ։ Կապարային լոռության մեջ
 լսվեց սուր մկրատի զգուշավոր շխկոցը, և
 Մելանիայի շքեղ զիսակները, արմատից ան-
 ջատվելով, թափվեցին բարձի վրա և այն տե-
 ղից ծանրորեն դեղի հատակը վորսպիս սպան-
 ված թռչուն։ Սամսոնը ժամանակ չկորցրեց
 եր դժոխային դիտավորությունը մինչև վեր-
 ջը իրագործելու։ Նա շտապով դուրս բերեց
 դրապանից որվակը, թափեց մի քանի կաթիլ
 նրա մեջ ոլարունակված հեղուկից բամբակի
 վրա և թեքվեց դեղի Մելանիան։ Հանկարծ
 նրա ձեռը դողաց։ Նա մի քայլ յետ կանդնեց։

Մելանիան հանդարտիկ աչքերը բաց արավ
և նայեց հետ այն վայրկյանին, յերբ չարու-
թյան դործիքը պիտի առ միշտ այլանդակեր
նրա գեղեցկությունը։ Նա գլուխը բարձրաց-
րեց, նստեց անկողնի մեջ, աչքերը հածելով
շուրջը՝ մզձավանջից արթնացածի պես։ Բայց
արթնացավ նա այն վայրկյանին, յիշը նշմա-
րհց Սամսոնին, վոր կիսամերկ կանդնած եր
սենյակի մեջտեղում լուռ, անշարժ, մի ձե-
ռում պահած սրվակը, մյուսում բամբակը։ Նա
արձակեց մի թույլ ճիչ և վոտքի կանգնեց։
Նա ձեռներով շոշափեց գլուխը և արտասա-
նեց։

— Գլուխս... չկա... .

Նայեց աջ ու ձախ, վեր ու վար և տեսավ
հատակի ու բարձի վրա սփաված մաղերը, և
սարսուց ամրող մարմնով։

— Այս ի՞նչ է, — դոչեց նա, սարսափած
հայացքը ամուսնուն դարձնելով։

Սամսոնը լուռ եր։ Մի չարախինդ ժպիտ
աղավաղել եր մարդու դեմքը։

— Ի՞նչ ես անում այստեղ, ի՞նչ ես արել, —
նորեն դոչեց Մելանիան :

Սամսոնը անգիտակցաբար հատակի վրա
ձգեց ձեռքուամ բոնած բամբակը, վոր այրում
էր նրա մատները : Մելանիան արագ հարձակ-
վեց, վերցրեց զետնից բամբակը, մոտեցավ
լամպարին, աչքերը հեռացնելով Սամսոնից :
Նույն վայրկյանին մատների ծայրում զգաց
այրոց, դեն ձգեց բամբակը և մնաց տևդն ու
տեղը սառած :

— Յես ուզում եյի քեզ բժշկել ամբարտա-
վանությունից, — արտասանեց Սամսոնը, և
նրա ձայնը հնչեց այնպիսի չարախնդու-
թյամբ, վորից Մելանիայի մարմինը պատեց
սառը քըտինքով :

— Աա՛, — աղաղակեց սարսափած կինը և
թուլացած ընկավ անկողնակալի վրա :

Նա ամեն բան հասկացավ, և՛ այն, ինչ վոր
էր, և՛ այն, ինչ վոր պիտի լիներ, և՛ այն,
ինչ վոր չպիտի լիներ : Սակայն հասկացավ
նաև, վոր դիվային դիտակորությունը հրե-

շավոր մարդու իրազործվել է միայն կիսով
չափ։ Նույն վայրկյանին վոտքի յելավ և
չտապով անցավ հարևան սենյակը, ուր քնած
եր ժորժիկը դայակի հետ։

Սամսոնը լսեց, թե ինչպես դռները փակվե-
ցին, բանալին պտտեց, և զգաց, վոր այլեւ
ամեն ինչ վերջացած է, վոր բանալիի այդ
ոլորոյուր կտրեց ամեն մի կապ իր և Մե-
լանիայի միջև։ Նա չկարողացավ իրազործել
յուր զաղըելի միտումը—զրկել կնոջը գեղեց-
կությունից, վորապեսզի առմիշտ տիրե նրան
վորովես մի սեփականություն, վոր ուրիշ
վոչ վոքի չի կարող պիտանի լինել։

Նա անցավ յուր սենյակը և յերեանիվար
պառկեց անկողնակալի վրա, բռունցքները
սեղմելով գլխին։ Այն միջոցը, վորով նա
անհաջող փորձեց պաշտպանել Մելանիային
մոլորությունից և ապահովել յուր ընտա-
նեկան պատիվը, այժմ նրան թվաց սոսկալի
յերազ . . .

Առավոտյան տասնումեկ ժամն եր, յերբ
Սամսոնը բաց արավ անքնությունից ուռած
ու կարմբած աչքերը։ Ներս մտավ սպա-
սավորը և լուռ տվեց նրան մի ծրար։ Նա
բաց արավ ծրարը։ Մելանիայի ձեռագիրն
եր, նամակը դրված եր համառոտ և շատ
դրական։ Մելանիան դրում եր, թե հասկացել
ե նրա չար դիտավորությունը։ Մի մարդ,
վոր ընդունակ ե այդպիսի դիտավորության,
չի խորշիլ անդամ սպանության մտքից։ Նա-
մակը վերջանում եր այս խոռաքերով։

— Ցես վերադառնում եմ ծնողներիս մոտ,
թողնելով ամեն ինչ և ամենը, նույնիսկ Ժոր-
ժիկիս։ Ցես ազատում եմ կյանքս և գեղեց-
կությունս։ Ցես ուզում եմ ապրել, զգալ ու
տպրել։

— ՅԵՐԲ գնաց տիրուհիդ, — հարցրեց Սամ-
սոնը խեղդված ձայնով։

— Առավոտյան գնացքով։

Սամսոնը ամոթահար, հուսահատ և ուժաս-



Գլաւիվահ լիազոր՝ Ա—3098.

Հբատ. 4604. Պատվեր 462. Տիրաժ6000.

Թուղթ 62×94 տպ. $9\frac{1}{4}$ մամ.

Մէկ մամուլում 15,560 նշան.

ԳԵՐԱԿՐՈՅԻ Լ առաջան, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041701

1
5837

МЕЛАНОВА

Гидр. кн. ССР. Евр. Изд.